«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԿԱԴԵՄԻԱ»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

ՀՏԴ 328.185:34:33
ԳՄԴ 66+67+65
Հ 170

Երաշխավորված է տպագրության
«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան

Հեղինակներ՝
Ա. Հակոբյան՝ իրավ. գիտ. թեկնածու, 1-ին մոդուլ (համատեղ.), 4-րդ մոդուլ
Ա. Խուդավերդյան՝ տնտ. գիտ. թեկնածու, 2-րդ մոդուլի 1-ին (համատեղ.), 2-5-րդ թեմաներ, 3-րդ մոդուլի 3-ից 5-րդ թեմաներ
Վ. Հոկտանյան՝ 1-ին մոդուլ (համատեղ.), 2-րդ մոդուլի 1-ին թեմա (համատեղ.)
Գ. Հովհաննիսյան՝ 3-րդ մոդուլի 1-ին և 2-րդ թեմաներ
Խ. Բեզիրջյան՝ կենս. գիտ. թեկնածու, 5-րդ մոդուլ
Թ. Խեչոյան՝ 6-րդ մոդուլ

Հ 170 «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի գործնական առաջադրանքների ժողովածու / Ա. Հակոբյան, Ա. Խուդավերդյան, Վ. Հոկտանյան, Գ. Հովհաննիսյան, Խ. Բեզիրջյան, Թ. Խեչոյան.– Եր.: Հեղ. հրատ., 2022.– 76 էջ:

Սույն ժողովածուն մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացը գործնականում արդյունավետ անցկացնելու, ինչպես նաև դասընթացով նախատեսված հմտություններն ապահովելու նպատակով: Այն նախատեսված է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում նշված դասընթացն իրականացնող դասախոսական կազմի համար:

Ժողովածուի մեջ ներառված գործնական առաջադրանքները, վարժությունները, ակնարկները և թեստերը կազմված են հայաստանյան իրականությունում տեղի ունեցած և մամուլում կամ ԶԼՄ-ներում հրապարակված իրական դեպքերի, ինչպես նաև միջազգային պրակտիկայում հանդիպող և դասավանդման գործընթացում կիրառվող օրինակների հիման վրա: Թեստերը կազմված են դասավանդվող թեմատիկայի բովանդակությանը և կրթական ծրագրով պահանջվող հմտությունների մակարդակին համապատասխան:

Ժողովածուն իրական օգնություն կցուցաբերի հակակոռուպցիոն կրթության շահառուներին և հանրային կառավարման հարցերով հետաքրքրված անձանց:

ՀՏԴ 328.185:34:33
ԳՄԴ 66+67+65

ISBN 978-9939-0-4072-1

© Հակոբյան Ա., 2022
© Խուդավերդյան Ա., 2022
© Հոկտանյան Վ., 2022
© Հովհաննիսյան Գ., 2022
© Բեզիրջյան Խ., 2022
© Խեչոյան Թ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼ 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

Թեմա 1. Կոռուպցիան հասկանալու կամ ընկալելու մոտեցումները, կոռուպցիայի սահմանումը և հատկանիշները 7

Թեմա 2. Կոռուպցիայի պատճառները և հետևանքները 8

Թեմա 3. Կոռուպցիայի դրսևորումները, տեսակները և դրանց դասակարգումը 9

Թեմա 4. Հայաստանում կոռուպցիայի դրսևորման առանձնահատկությունները 11

ՄՈԴՈՒԼ 2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15

Թեմա 1. Հակակոռուպցիոն քաղաքականություն: Ռազմավարություններ ու ծրագրեր, դրանց իրականացման մոնիտորինգի համակարգը 15

Թեմա 2. Հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններ 16

Թեմա 4. Հանրային վերահսկողությունը և ազդարարման համակարգը 24

ՄՈԴՈՒԼ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 26

Թեմա 1. Բարեվարքության (integrity) հայեցակարգը, տեսական մոտեցումները և հիմնական տարրերը 26

Թեմա 3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախում: Անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, նվերների ընդունման արգելք: 43

Թեմա 5. Բարեվարքության համակարգի կառավարումը: Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովները: Բարեվարքության հարցերով կազմակերպիչը 53

ՄՈԴՈՒԼ 4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ 57

Թեմա 1. Կոռուպցիոն իրավախախտումների առանձնահատկությունները և տեսակները 57

Թեմա 2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման առանձնահատկությունները 58

Թեմա 3. Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների առավել ծանր դրսևորումների որակման և քննության առանձնահատկությունները 59

Թեմա 4. Ակտիվների վերադարձ. ապօրինի գույքի բռնագրավում, ռազմավարություն և գործիքներ, իրավական և ընթացակարգային ասպեկտները 61

Թեմա 5. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մարմիններ 61

ՄՈԴՈՒԼ 5. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ 65

Թեմա 1. Քաղաքական կոռուպցիա 65

Թեմա 2. Կուսակցությունների ֆինանսավորում 65

Թեմա 3. Քաղաքական կոռուպցիան և ընտրությունները 66

Թեմա 4. Քաղաքական կոռուպցիան միջազգային ասպարեզում 66

ՄՈԴՈՒԼ 6. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ 68

Թեմա 1. Կոռուպցիայի սոցիալ-տնտեսական բովանդակությունը 68

Թեմա 2. Կոռուպցիայի ազդեցությունը տնտեսության վրա 70

Թեմա 3. Կոռուպցիան և գործարար ոլորտը 71

Թեմա 4. Կոռուպցիան հանրային ֆինանսների կառավարման ոլորտում 74

Հիմնական հասկացություններ և հապավումներ

ՀՀ ՊԿԱ - Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
ԿԿՀ - Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԵԽ - Եվրոպայի խորհուրդ
ԵՄ - Եվրոպական միություն
ԿԲ - Կենտրոնական բանկ
ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
ԳԼԿ - Գործընկերություն հանուն լավ կառավարման
ԶԼՄ - Զանգվածային լրատվական միջոցներ
ՀՌԻՄԾ - Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիր
ՀԲԻ - Համաշխարհային բանկի ինստիտուտ
ԵԱՏՄ - Եվրասիական տնտեսական միություն
ԹԻ - Թրանսփարենսի Ինթերնեշնլ
ԹԻՀԿ - Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

ՄՈԴՈՒԼ 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. Կոռուպցիան հասկանալու կամ ընկալելու մոտեցումները, կոռուպցիայի սահմանումը և հատկանիշները

Վարժություն 1.

● ՀԲԻ-ի «Worldwide Governance Indicators» կայքից դուրս բերել *կոռուպցիայի վերահսկման համաթվի (Control of Corruption)* Հայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների համար վերջին հինգ տարիների մեծությունները, համադրել իրար հետ և փորձել վերլուծել դրանց տարբերությունները՝ ըստ երկրների և տարիների: Նույն համադրումը և վերլուծությունը կատարել՝ հիմք ընդունելով Հայաստանի և իր հարևան երկրների վերջին հինգ տարիների համաթվերի մեծությունները:

● Վերը նշված առաջադրանքը կատարել՝ հիմք ընդունելով ԹԻ *կոռուպցիայի ընկալման համաթվի* ցուցանիշները: Նույն առաջադրանքը կատարել՝ հիմք ընդունելով «Ֆրիդոմ հաուսի» «Պետություններն անցումային փուլում» (Nations in Transit) ուսումնասիրության *կոռուպցիա* ենթահամաթվի ցուցանիշները: Այս դեպքում, հաշվի առնելով ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրները, Հայաստանի և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ցուցանիշներից բացի, համադրել և վերլուծել Հայաստանի և Արևելյան գործընկերության անդամ մյուս երկրների վերջին հինգ տարիների ցուցանիշները:

● Յուրաքանչյուր համադրության վերաբերյալ քննարկումների, մեկնաբանությունների ու կարծիքների փոխանակում՝ ուշադրություն դարձնելով, թե որքանով են միևնույն երկրի նշված երեք համաթվերն իրարից տարբերվում: Մասնակիցների բանավոր ելույթներ:

Խմբի ելույթում անդրադարձ է կատարվում՝

● առանձին կայքի նկարագրությանը,

● համապատասխան ցուցիչի մեծության ընտրության և դուրսբերման հնարավորությանը,

● համապատասխան ցուցիչի բովանդակությանը և նկարագրությանը, չափելիության և արժեքների մեծությանը,

● յուրաքանչյուր ցուցիչի միջոցով բնութագրվող երևույթի և հակակոռուպցիոն քաղաքականության համապատասխան արժեքի կամ սկզբունքի կապին,

● յուրաքանչյուր ցուցիչի՝ Հայաստանի համար հաշվարկված մեծությունների շարքի ստացմանը, տարածաշրջանի այլ երկրների հետ համադրմանը:

Յուրաքանչյուր ցուցիչի դինամիկ շարքի հիման վրա կատարվում են եզրահանգումներ և ներկայացվում առաջարկություններ՝ տարվող հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ: Խմբերի ելույթներից հետո անցկացվում են քննարկումներ, արվում մեկնաբանություններ:

Խմբերի այն մասնակիցները, որոնք ելույթ չեն պատրաստել, մեկնաբանություններ են անում մյուս խմբերի ներկայացրած ելույթների վերաբերյալ՝ նշելով, թե որքանով են դուրս բերված ցուցիչները բնութագրում արդար կառավարման սկզբունքները, և որքանով են հայաստանյան ցուցիչները բնութագրական կոռուպցիոն ռիս-

կերի կառավարման տեսանկյունից: Բանավոր ելույթները դասի վերջում գնահատվում են:

Ելույթի գնահատումը կատարվում է՝ հաշվի առնելով՝

- ՀԲԻ-ի կայքից օգտվելու կարողությունը,
- համապատասխան ցուցիչի բովանդակության, չափելիության և արժեքների մեծության, հաշվարկված մեծությունների շարքի ստացման ունակությունը,
- «լավ կառավարման» համապատասխան արժեքի կամ սկզբունքի վերաբերյալ կատարված եզրահանգումների և առաջարկությունների որակը:

Վարժություն 2.

ԹԻՀԿ-ի կայքից դուրս բերել և հաշվարկել կոռուպցիայի մակարդակի և տարածվածության՝ *կոռուպցիայի ընկալում* և *կոռուպցիայի բարոմետր* ինդեքսների մեծությունները՝ ըստ տարիների.

- կոռուպցիայի տարածվածության դինամիկայի հաշվարկում՝ ըստ ոլորտների,
- կատարել համեմատական վերլուծություն տարածաշրջանային երկրների համարժեք ցուցանիշների հետ,
- յուրաքանչյուր ցուցիչի վերաբերյալ քննարկումներ, մեկնաբանությունների ու կարծիքների ներկայացում, բանավոր ելույթներ մասնակիցների կողմից:

Ելույթի գնահատումը կիրականացվի՝ հաշվի առնելով՝

- ԹԻՀԿ պաշտոնական կայքէջից օգտվելու կարողությունը,
- համապատասխան ցուցիչը հաշվարկելու, համեմատական վերլուծություն իրականացնելու կարողությունը,
- կատարված եզրահանգումների և առաջարկությունների որակը:

Վարժություն 3.

ՀՀ դատախազության պաշտոնական կայքէջից դուրս բերել 2014-2022 թվականների ընթացքում բացահայտված կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրական տվյալները.

- հաշվարկել կոռուպցիայի տարածվածության մակարդակը՝ ըստ տարիների,
- հաշվարկել կոռուպցիայի տարածվածության դինամիկան,
- կատարել համեմատական վերլուծություն:

Յուրաքանչյուր արդյունք քննարկել, հանդես գալ մեկնաբանություններով, փոխանակել կարծիքներ: Բանավոր ելույթներ մասնակիցների կողմից: Ելույթի գնահատումը կիրականացվի՝ հաշվի առնելով՝

- ՀՀ դատախազության պաշտոնական կայքէջից օգտվելու կարողությունը,
- համապատասխան ցուցիչը հաշվարկելու, համեմատական վերլուծություն իրականացնելու կարողությունը,
- կատարված եզրահանգումների և առաջարկությունների որակը:

Թեմա 2. Կոռուպցիայի պատճառները և հետևանքները

Վարժություն 4.

Սովորողներին բաժանել խմբերի և հանձնարարել խմբային աշխատանք.

- Յուրաքանչյուր խմբի բաժանել երկուական խնդիր:
- Խմբերը պետք է ուսումնասիրեն իրենց տրված խնդրների ֆաբուլան և վեր հանեն կոռուպցիայի դրսևորման պատճառը, պայմանները և կրիմինոգեն գործոնները:
- Այնուհետև յուրաքանչյուր խումբ պետք է թվարկի ֆաբուլայից բխող կոռուպցիոն դրսևորման հիմնական հետևանքները և դրանք նվազագույնի հասցնելու ուղիները:
- Հիմնական եզրահանգումները ներկայացվում են մագնիսամարկերային գրատախտակների (ֆլիպչարթ) օգտագործմամբ կամ PPT ձևաչափով և համապատասխան հիմնավորումներով:

Նշված հարցերի պատասխանների հիման վրա կկատարվի գնահատում:

Վարժություն 5.

Լսարանում ձևավորված 3-4 հոգանոց խմբերին հանձնարարել մեկական խնդիր (առաջադրանք): Յուրաքանչյուր խումբ պետք է՝

- ընտրի 2-3 երկիր և, կրկնելով Թեմա 1-ի առաջադրանքները, դուրս բերի նրանց կոռուպցիայի համաթվերը (ԹԻ-ի *կոռուպցիայի ընկալման համաթիվ,* Համաշխարհային բանկի *կոռուպցիայի կառավարման համաթիվ* կամ «Ֆրիդոմ հաուսի» *կոռուպցիա ենթահամաթիվ*),
- կիրառելով դասախոսության արդյունքում ստացած գիտելիքները՝ բացատրի և հիմնավորի այդ երկրների կոռուպցիայի համաթվերի միջև տարբերություններ ծնող պատճառները և այդ համաթվերի մեծությունների միջոցով վերլուծի դրանց հետևանքները,
- աշխատանքը ներկայացնի բանավոր՝ զուգակցելով PPT շնորհանդեսով կամ flipchart-ով:

Թեմա 3. Կոռուպցիայի դրսևորումները, տեսակները և դրանց դասակարգումը

Վարժություն 6.

- Սովորողները դասախոսության արդյունքում ձեռք բերած գիտելիքների և նախապես տրամադրված խնդիրների հիման վրա պետք է սահմանեն խնդրում նկարագրված յուրաքանչյուր իրավիճակի համապատասխանությունը կոռուպցիայի տեսակներից որևէ մեկին:
- Սովորողներին գործնական դասաժամին կհանձնարարվի խմբավորել կոռուպցիայի տեսակները՝ ըստ դասակարգման տարբեր հիմքերի: Այնուհետև սովորողների խմբերին կհանձնարարվի ինքնուրույն օրինակներ բերել կոռուպցիայի յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ:
- Յուրաքանչյուր խմբին կհանձնարարվի ինքնուրույն բերել դասախոսության մեջ նկարագրված կոռուպցիայի վարչական, քաղաքական և մասնավոր հատվածի տեսակներից մեկական օրինակ: Այնուհետև խումբը պետք է ներկայացնի իր բերած օրինակների առանձնահատկությունները, պատճառները և հետևանքները:

● Սովորողներին կհանձնարարվի ինքնուրույն ուսումնասիրել միջազգային կամ ներպետական մակարդակում հնչեղություն ստացած որևէ կառուպցիոն դրսևորում (սկանդալ), ներկայացնել դրա առանձնահատկությունները, պատճառները և հետևանքները:

Նշված հարցերի պատասխանների հիման վրա կկատարվի գնահատում:

Վարժություն 7.

Ա.-ն ծառայության գծով ավելի արագ է առաջ գնում, քան իր գործընկերները, քանի որ նա նախարարի կամ այլ բարձրաստիճան պաշտոնյայի ազգականն է կամ մտերիմ ընկերը:

Արդյոք կարո՞ղ ենք այս դեպքում խոսել կոռուպցիայի մասին: Եթե այո, ապա ո՞ր կոռուպցիոն դրսևորման մասին է խոսքը:

Հիմնավորեք ձեր պատասխանը:

Վարժություն 8.

Խոշոր առևտրային կազմակերպությունը պատգամավորի հետ համաձայնության է գալիս առ այն, որ նա Ազգային ժողովում կքվեարկի կազմակերպությանը ձեռնտու ձևով՝ դրա համար խոստանալով վարձավճար կամ ծառայությունների մատուցում:

Արդյոք կարո՞ղ ենք այս դեպքում խոսել կոռուպցիայի մասին: Եթե այո, ապա ո՞ր կոռուպցիոն դրսևորման մասին է խոսքը:

Հիմնավորեք ձեր պատասխանը:

Վարժություն 9.

Հիվանդանոցում հիվանդը նվերներ է տալիս կամ վճարում է բժշկին՝ ուշադիր վերաբերմունքի և առանց հերթի սպասարկման համար: Բժիշկը դա չի պահանջում, բայց չի էլ հրաժարվում գումարից և նվերներից: Ինչպե՞ս կորակեք բժշկի գործողությունները:

Վարժություն 10.

Ոստիկանության անձնագրային բաժնի պետը, ստանալով որոշակի գումար, արագացնում է անձանց գրանցումը: Որակեք նրա գործողությունները:

Արդյոք այս դեպքում կարո՞ղ ենք խոսել կոռուպցիայի մասին:

Եթե այո, ապա ո՞ր կոռուպցիոն դրսևորման մասին է խոսքը:

Հիմնավորեք ձեր պատասխանը:

Վարժություն 11.

Ուսումնական կազմակերպության ղեկավարը ընկերության տրանսպորտային միջոցը ոչ աշխատանքային ժամերին պարբերաբար օգտագործում էր անձնական ճանապարհորդությունների համար:

Առաջարկվող տարբերակներից ընտրեք ճիշտ պատասխանը.

1) Ղեկավարի գործողություններում առկա են կոռուպցիոն իրավախախտման հատկանիշներ:

2) Կոռուպցիոն իրավախախտման հատկանիշներ առկա չեն, սակայն առկա է վարքագծի էթիկական ստանդարտների խախտում:

3) Ղեկավարը կատարել է կարգապահական խախտում:
4) Ղեկավարը չի կատարել ապօրինի գործողություններ:
5) Ղեկավարի գործողություններում առկա են տարբեր խախտումներ:
Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Թեմա 4. Հայաստանում կոռուպցիայի դրսևորման առանձնահատկությունները

Վարժություն 12.

Սովորողների յուրաքանչյուր խումբ (3-4 հոգի) պետք է ուսումնասիրի և վեր հանի Հայաստանում տարբեր ոլորտներում կոռուպցիոն ժամանակակից դրսևորումներից որևէ մեկը, նկարագրի այն և ներկայացնի լսարանին:

Այնուհետև, սովորողների հետ համատեղ քննարկումների արդյունքում, յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի ընտրված ոլորտում կոռուպցիայի տարածվածության հիմնական պատճառները, հետևանքները, նրանց պատճառահետևանքային կապը:

Խմբերը աշխատանքը ներկայացնում են գրավոր և համապատասխան հիմնավորումներով:

Ներկայացման համար կարող են օգտագործվել մագնիսամարկերային գրատախտակներ (ֆլիպչարթ), իսկ հիմնական եզրահանգումները կարող են ներկայացվել PPT ձևաչափով:

Վարժություն 13.

Թեմատիկ վերլուծական ակնարկի պատրաստում և քննարկում:

Յուրաքանչյուր սովորող պետք է ուսումնասիրի և վեր հանի Հայաստանում որևէ կոռուպցիոն ժամանակակից դրսևորումներ, նկարագրի այն և ակնարկի տեսքով ներկայացնի լսարանին:

Հանձնված գրավոր վերլուծական աշխատանքներն ընթերցելուց հետո դասախոսը ներկայացնում է գրավոր մեկնաբանություններ, իսկ հաջորդ դասաժամի ընթացքում կազմակերպում է քննարկում և կարծիքների փոխանակում թեմայի վերաբերյալ:

Ակնարկի գնահատումն ուղղակիորեն կախված չէ կատարված աշխատանքի ներկայացված էջերի քանակից: Մեկնաբանությունները պետք է շարադրված լինեն որպես թեզեր: Աշխատանքի ծավալը սովորաբար պետք է լինի առնվազն 2 և ոչ ավելի, քան 4 էջ (տիտղոսաթերթ չի պահանջվում, թղթի ձևաչափը՝ A-4, տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5): Միևնույն ժամանակ, ակնարկի գնահատականը կարող է իջեցվել սովորողի սեփական կարծիքը հակիրճ, սեղմ արտահայտելու անկարողության համար:

Այնուհետև, լսարանում համատեղ քննարկումների արդյունքում սովորողը պետք է ներկայացնի ընտրված ոլորտում կոռուպցիայի տարածվածության հիմնական պատճառները, հետևանքները, դրանց պատճառահետևանքային կապը:

Սովորողները աշխատանքը ներկայացնում են գրավոր և համապատասխան հիմնավորումներով: Ներկայացման համար կարող են օգտագործվել մագնիսամարկերային գրատախտակներ (ֆլիպչարթ), իսկ հիմնական եզրահանգումները կարող են ներկայացվել PPT ձևաչափով:

Ակնարկի թեմաներ

● Կոռուպցիայի առանձնահատկությունները Հայաստանի տնտեսական և քաղաքական զարգացման անցումային շրջանում

● Հայաստանում քաղաքական և տնտեսական ոլորտներ կոռուպցիայի ներթափանցման հիմնական պատճառները

● Հայաստանում կոռուպցայի տարածվածության հիմնական պատճառները և նախադրյալները

● Հայաստանում կոռուպցիայի բարոյահոգեբանական ազդեցությունը հանրային գիտակցության վրա

● Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարում օրենսդրական և կազմակերպչական խնդիրները

● Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականության համապատասխանությունը հայկական իրողություններին:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Անուն, ազգանուն, հայրանուն _____

_____

(ստորագրություն)

«_____» _____ 2022 թ.

(օրը, ամիսը, տարին)

Թեստային առաջադրանքը կատարելու համար մասնակցին տրվում է 60 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է **5 միավոր**, իսկ սխալ պատասխանը՝ **0 միավոր**: Սխալ պատասխան է համարվում ոչ ճիշտ պատասխան նշելը (այդ թվում՝ ոչ ամբողջական պատասխանը) և որևէ պատասխան չնշելը:

Հարց 1. Կոռուպցիա է համարվում՝

1. կաշառակերությունը,
2. գողությունը,
3. պաշտոնական լիազորությունները անձնական նպատակներով օգտագործելը,
4. պաշտոնատար անձի և գործարար կառույցների միաձուլումը,
5. բոլոր տարբերակները ճիշտ են:

Հարց 2. Հայաստանում կոռուպցիայի պատճառներն են՝

1. իրավապահ համակարգի անկարողությունը,
2. քաղաքացիների ցածր իրավական գիտակցության մակարդակը,
3. պաշտոնատար անձանց՝ ոչ թե օրենքին, այլ վերադասի հրահանգներին ենթարկվելու սովորույթը,
4. սովորույթներն ու ավանդույթները,

5. ազգային բնավորության հատկությունները,
6. բոլոր տարբերակները ճիշտ են:

Հարց 3. Կոռուպցիայի հետևանքները կարող են լինել.
1. տնտեսական,
2. սոցիալական,
3. քաղաքական,
4. իրավական,
5. ազգային,
6. բոլոր տարբերակները ճիշտ են:

Հարց 4. Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան վավերացրել է՝
1. 2008 թվականին,
2. 2004 թվականին,
3. 2005 թվականին,
4. 2006 թվականին:

Հարց 5. Կոռուպցիայի տեսակները ներառում են՝
1. կենտրոնացված կոռուպցիան,
2. ապակենտրոնացված կոռուպցիան,
3. ապօրինի լոբբիզմը,
4. կուսակցությունների ապօրինի ֆինանսավորումը,
5. բոլոր տարբերակները ճիշտ են:

Հարց 6. Նշեք կոռուպցիայի ձևերը.
1. նեպոտիզմ,
2. ֆավորիտիզմ,
3. պաշտպանողականություն,
4. պաշտոնական դիրքի օգտագործումը,
5. իր կամ այլ անձի համար դրամական կամ նյութական օգուտ ստանալը,
6. բոլոր տարբերակները ճիշտ են:

Հարց 7. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայում տրված է՝
1. կոռուպցիայի սահմանումը,
2. կոռուպցիայի հիմնական տեսակները,
3. կոռուպցիայի պատճառները,
4. կոռուպցիայի հետևանքները:

Հարց 8. Ընտրեք «լավ կառավարման»՝ ՀԲԻ-ի կողմից հաշվարկվող ցուցիչները.
1. կարգավորման որակի ինդեքս,
2. կառավարման արդյունավետության ինդեքս,
3. օրենքի գերակայության ինդեքս,

4. ձայնի լսելիության և հաշվետվողականության ինդեքս,
5. քաղաքական կայունության և ճնշումների բացակայության ինդեքս,
6. կոռուպցիայի վերահսկման ինդեքս:

Հարց 9. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) ուշադրության կենտրոնում են՝

1. կոռուպցիայի նկատմամբ հանրության վերաբերմունքը,
2. հանրության՝ կոռուպցիոն երևույթների հետ շփման փորձը,
3. կոռուպցիայի մակարդակի փորձագիտական ընկալումները,
4. բոլոր տարբերակները ճիշտ են:

Հարց 10. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան կոռուպցիայի դրսևորում է համարում՝

1. պաշտոնատար անձանց ակտիվ և պասիվ կաշառակերությունը,
2. օտարերկրյա պաշտոնատար անձանց և միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ակտիվ և պասիվ կաշառակերությունը,
3. ազդեցության չարաշահումը,
4. պաշտոնատար անձի կողմից գույքի հափշտակումը, ապօրինի յուրացումը կամ այլ՝ ոչ նպատակային օգտագործումը,
5. բոլոր տարբերակները ճիշտ են,
6. ակտիվ և պասիվ կաշառակերությունը մասնավոր հատվածում,
7. ապօրինի հարստանալը:

ՄՈԴՈՒԼ 2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմա 1. Հակակոռուպցիոն քաղաքականություն: Ռազմավարություններ ու ծրագրեր, դրանց իրականացման մոնիտորինգի համակարգը

Վարժություն 1.

«Հակակոռուպցիոն քաղաքականություն: Ռազմավարություններ ու ծրագրեր, դրանց մոնիտորինգի համակարգը» թեմայի ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում «ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների ծրագրի» առանձին միջոցառման օրինակով նախապատրաստել այդ միջոցառման մոնիտորինգի զեկույցի (ակնարկի) շարադրանք:

Յուրաքանչյուր սովորող հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումներից (ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման N 2 հավելված) կընտրի 2019-2020 թթ. վերաբերելի արդյունքներից մեկը, որը կգրանցի խմբի ավագը: Մյուս սովորողները նույն թեման չեն կարող ընտրել:

Մոնիտորինգի զեկույցում պետք է նշվի՝

- թե որքանո՞վ է նշված միջոցառման իրականացման ակնկալվող արդյունքը կապակցված միջոցառման վերստուգիչ ցուցանիշի հետ,
- արդյոք այն բխո՞ւմ է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից,
- ի՞նչ ցուցիչներ են պլանավորված միջոցառման գնահատման համար,
- որքանո՞վ է ակնկալվող արդյունքը իրականացվել օրենսդրական ակտերի ընդունման տեսքով և գործնականում,
- առկա՞ է արդյոք ակնկալվող արդյունքի իրավական հիմքը, եթե այո, ապա նշել այն և աղբյուրը,
- նշել նաև, թե արդյոք գործնականում այն կատարվա՞ծ է, թե՞ ոչ, նշել կատարման փաստը հավաստող տեղեկությունը և դրա աղբյուրը:

Նշված հարցերի պատասխանների հիման վրա շարադրել սեփական մեկնաբանությունները և ներկայացնել առաջարկություններ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրային միջոցառումների արդյունքների և վերստուգիչ ցուցիչի փոփոխության անհրաժեշտության կամ նոր միջոցառում նախատեսելու վերաբերյալ և ներկայացնել մասնակիցներին PPT ձևաչափով:

Ակնարկի գնահատումն ուղղակիորեն կախված չէ կատարված աշխատանքի էջերի քանակից: Մեկնաբանությունները պետք է շարադրված լինեն որպես թեզեր: Աշխատանքի ծավալը սովորաբար պետք է լինի առնվազն 2 և ոչ ավելի, քան 4 էջ (տիտղոսաթերթ չի պահանջվում, թղթի ձևաչափը՝ A-4, տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5): Միևնույն ժամանակ, ակնարկի գնահատականը կարող է իջեցվել սովորողի սեփական կարծիքը հակիրճ, սեղմ արտահայտելու անկարողության համար: Տեքստում նկարազարդումներ (դիագրամներ,

գծապատկերներ, աղյուսակներ, նկարներ և այլն) կարող են ներառվել բանականության սահմաններում:

Թեմա 2. Հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններ

Վարժություն 2.

Լսարանը բաժանել երեք խմբի:

Ընտրված խմբերին տրամադրել հակակոռուպցիոն քաղաքականության մշակման ու կանխարգելման ինստիտուցիոնալ կառույցների անվանումները.

Խումբ 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով,

Խումբ 2. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ,

Խումբ 3. ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի վարչություն:

Յուրաքանչյուր խումբ՝

- էլեկտրոնային կայքերից փնտրում և գտնում է համապատասխան օրենսդրական ակտերը և ուսումնասիրում այդ կառույցների նպատակները, խնդիրները, գործառույթներն ու լիազորությունները,
- դասակարգում է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման կառույցի հիմնական գործառույթները և դուրս բերում հակակոռուպցիոն քաղաքականության գործում դրանց մասնակցության եղանակները,
- նախապատրաստում է առաջարկություններ այդ կառույցների գործառույթների ու գործիքակազմերի բարելավման վերաբերյալ,
- նախապատրաստում է կարճ ելույթ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման տեսանկյունից և ներկայացնում առաջարկություններ այդ կառույցներին նոր գործառույթների վերապահման կամ դրանց միավորման կամ նորերի ստեղծման ուղղությամբ:

Վարժություն 3.

Թեստային առաջադրանք՝ «Հայաստանի հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն քաղաքականության ինստիտուցիոնալ մարմիններ» թեմայով:

Թեստային առաջադրանքը կազմված է բազմակի պատասխաններից՝ մեկ ճիշտ պատասխանի ընտրության սկզբունքով: Թեստային հարցաշարը ներառում է հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված ինստիտուցիոնալ նոր կառույցների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի, այդ խորհրդում հասարակական կազմակերպությունների ներկայացվածության, ՀՀ արդարադատության նախարարության «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիտորինգի» կառուցվածքային նոր միավորների, հակակոռուպցիոն կոմիտեի և մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանների նպատակներին, խնդիրներին, գործառույթներին ու լիազորություններին վերաբերող թեմաներ:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Անուն, ազգանուն, հայրանուն _____

_____

(ստորագրություն)

«_____» _____ 2022 թ.

(օրը, ամիսը, տարին)

Հարց 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթներից է՝

1. օրենքով սահմանված բացառապես այլ սահմանափակումների կիրառման միասնականությունն ապահովելը,
2. օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների կիրառման միասնականությունն ապահովելը,
3. պաշտոնատար անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելը:

Հարց 2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝

1. վերանայում է հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների եզրակացությունները,
2. վերանայում է դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի ակտերը,
3. վերանայում է դատախազների էթիկայի հանձնաժողովի եզրակացությունները:

Հարց 3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթներից է՝

1. հայտարարագրերի վերլուծությունը և արժանահավատության ստուգումը,
2. կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպումը,
3. կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագրի մոնիտորինգն ու գնահատումը:

Հարց 4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթներից է՝

1. իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների կատարման նկատմամբ մոնիտորինգ իրականացնելը,
2. կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը,
3. ազդարարների միասնական էլեկտրոնային համակարգի վարումը:

Հարց 5. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը ղեկավարում է՝

1. ՀՀ վարչապետը,
2. ՀՀ գլխավոր դատախազը,
3. ՀՀ արդարադատության նախարարը:

Հարց 6. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի հիմնական գործառույթներն են.

1. նախապատրաստում է հաշվետվություններ, զեկույցներ ծրագրերի կատարման վիճակի մասին,
2. մշակում է ոլորտային հակակոռուպցիոն ծրագրեր,
3. քննարկում է հակակոռուպցիոն ռազմավարությունները, ինչպես նաև դրանց հիման վրա մշակված ոլորտային ծրագրերը:

Հարց 7. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների ծրագրի մոնիտորինգն ու գնահատումն իրականացնում են՝

1. ՀՀ գլխավոր դատախազը,
2. ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումը,
3. բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը:

Հարց 8. ՀՀ-ում կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված պետական մարմիններ են՝

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը,
2. ՀՀ վերահսկիչ պալատը,
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Հարց 9. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ներգրավվում են՝

1. ԱԺ-ում ներկայացված ընդդիմադիր խմբակցությունների կողմից,
2. մրցութային հիմունքներով,
3. ուղղակիորեն նշանակվում են ՀՀ վարչապետի կողմից:

Հարց 10. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրով նախատեսվում է ձևավորել՝

1. հակակոռուպցիոն մասնագիտացված դատարան,
2. հակակոռուպցիոն կոմիտե,
3. վերը նշված բոլորը:

Թեմա 3. Կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և ազդեցության գնահատումը: Կոռուպցիոն ռիսկերի հիման վրա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մշակումը

Վարժություն 4.

Լսարանի 3-4 հոգուց կազմված խմբերին հանձնարարել խմբային աշխատանք՝ «Կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և ազդեցության գնահատումը: Կոռուպցիոն ռիսկերի հիման վրա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մշակումը» թեմայով.

● Յուրաքանչյուր խմբի կտրամադրվեն կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և հակակոռուպցիոն (բարեվարքության) միջոցառումների ձևաթղթերը, գնահատման սանդղակները, մեթոդիկան:

● Յուրաքանչյուր խումբ նախապես ընտրում է որևէ պետական մարմնի գործունեության կոնկրետ ոլորտ (օրինակ՝ անձնակազմի կառավարում, գնումներ, իրավական ակտերի նախագծերի մշակում կամ ծառայության մատուցում և այլն), ուսումնասիրում և վեր է հանում այդ ոլորտում կոռուպցիոն ռիսկերը, կատարում իրավական ակտերում կոռուպցիոն ռիսկերի առկայության գնահատում:

● Ռիսկերը վերհանելուց հետո խումբը առաջարկություններ է մշակում տվյալ ռիսկերի չեզոքացման, ինչպես նաև տվյալ մարմնի գործունեության կարգավորման նորմատիվ իրավական ակտի նախագծում փոփոխություններ կատարելու ուղղությամբ:

● Այնուհետև խմբերը փոխանակում են ներկայացված առաջարկությունները և կատարում փորձագիտական գնահատում՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների վերաբերյալ:

● Խմբերը աշխատանքը ներկայացնում են PPT ձևաչափով և համապատասխան հիմնավորումներով:

Գործնական առաջադրանքի օրինակ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կենսաթոշակի նշանակման, վերահաշվարկման և վճարման գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի բացահայտում, գնահատում և չեզոքացման միջոցառումների մշակում

Գործառույթ/ փուլ	Կոռուպցիոն գործոն	Կոռուպցիոն գործոնի նկարագրություն
Կենսաթոշակի դիմումի ներկայացում	**կենսաթոշակի նշանակման, վերահաշվարկի, վճարման դիմումներ ներկայացնելու գործընթացը պարունակում է քաղաքացիների հետ անհարկի շփումներ և քաշքշուկ**	«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը կենսաթոշակ նշանակելու **դիմումը պետք է ներկայացնի անձամբ:** ՀՀ Կառավարության 2011 թվականի 665-Ն որոշման **N** 10 հավելվածի, 4.2-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը **կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում անձամբ կենսաթոշակի իրավունք ունեցող անձը**, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը:
Կենսաթոշակի դիմումի ներկայացում	**կենսաթոշակի նշանակման, վերահաշվարկի, վճարման դիմումներ ներկայացնելու գործընթացը պարունակում է քաղաքացիների հետ անհարկի շփումներ և քաշքշուկ**	«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝ 2) կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, **հաշվառված չէ ՀՀ-ում բնակության վայրի հասցեում:**
		ՀՀ Կառավարության 2011 թվականի 665-Ն որոշման, **N** 1 հավելվածի, բաժին V-ի 81-րդ կետի համաձայն՝ եթե կենսաթոշակառուն ՀՀ տարածքում փոխում է հաշվառման վայրը, ապա **գրավոր դիմում է հաշվառման նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում:** Հաշվառման նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն ինքնաշխատ եղանակով ճշտում է բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները և հաշվառման նախկին վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից պահանջում է կենսաթոշակի գործը: Գործը ստանալուց հետո **ստուգում է դրանում անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունն ու կենսաթոշակի հաշվարկի ճշտությունը**, և կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի հաշվառման նախկին վայրում կենսաթոշակ վճարելը դադարեցնելու օրվանից: Այս դեպքում կենսաթոշակի էլեկտրոնային գործը հաշվառվում է կենսաթոշակառուի հաշվառման նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում:

Կոռուպցիոն ռիսկի նկարագրություն	Հավանակա-նություն	Ազդեցություն	Ռիսկի մակարդակ
Կենսաթոշակ նշանակելու բոլոր դեպքերում պահանջվում է դիմողի անմիջական ներկայությունը սոցիալական ծառայության տարածքային բաժնում, ընդ որում, բոլոր փաստաթղթերի համար: Պահանջվող փաստաթղթերի (այդ թվում՝ տարբեր կառույցներից ստացվող տեղեկանքներ) ծավալը, դրանց մասին քաղաքացիների իրազեկության պակասը կարող են պատճառ դառնալ ավելորդ այցելությունների, կառույցի աշխատակիցների հետ ավելորդ անմիջական շփումների, բարդությունների, քաշքշուկների, հիասթափությունների և կաշառքի ակնկալիքների վերաբերյալ ընկալումների ձևավորման:			
Կենսաթոշակը քաղաքացու վաստակն է, և այդ իրավունքը նա պետք է իրացնի՝ անկախ հաշվառված լինելու հանգամանքից, և այդ հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ ոչ միայն կենսաթոշակ չվճարելու, այլև չնշանակելու համար: Առավել ևս, կենսաթոշակ նշանակելը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ ներկայացված փաստաթղթերի կամ էլեկտրոնային համակարգում տվյալների բացակայության հանգամանքը: Այս օրենսդրական ձևակերպումները խիստ հայեցողական են և կարող են հանգեցնել ձևական որոշումների կայացման: Երբ անձը հաշվառված չէ, ըստ օրենքի՝ նրան կենսաթոշակ չեն նշանակում. դրա համար հիմք է համարվում բնակչության ռեգիստրի տվյալները: Իսկ երբ անձը հաշվառվում է, միայն այդ հանգամանքը հիմք չի հանդիսանում նրան ինքնաշխատ եղանակով կենսաթոշակ նշանակելու համար: Անձը ստիպված է կենսաթոշակ նշանակելու խնդրանքով կրկին դիմել կենսաթոշակային մարմին: Այս գործընթացի համար օրենքը ժամկետ է սահմանում, որպեսզի անձը կենսաթոշակի գումար չկորցնի: Տվյալ դեպքում էլ անձին այդ մասին տեղեկացնելու խնդիր է առաջանում, ինչը կրկին թողնված է աշխատակցի հայեցողությանը:			
Կենսաթոշակառուի համար կրկին սահմանվում է տարածքային բաժին ներկայանալու պարտականություն: Կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարման շարունակականությունը կապակցված է կենսաթոշակի գործը մեկ ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում տեղափոխելու հանգամանքով: Այս դրույթը հակասում է կարգի **N 1** հավելվածի**, բաժին** II-ի, 8-րդ կետում նշված «**ցանկացած տարածքային ստորաբաժանում ներկայացնելու**» իրավունքն ամրագրող դրույթին: Անձին հնարավորություն չի տրվում դիմելու նախկին հաշվառման հասցեի ստորաբաժանում, այլ ներկայացվում է հաշվառման նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում այցելելու պահանջ: Միաժամանակ, կենսաթոշակի գործը տեղափոխվելուց հետո գործընթացը նորից ստուգվում է: Սա, իհարկե, տարատեսակ մոտեցումներ և հետևանքներ է ենթադրում. մի կողմից այն հավելյալ վերահսկողական մեխանիզմ է, մյուս կողմից կենսաթոշակառուին կրկին կախվածության մեջ է գցում նոր ստորաբաժանումից և կարող է ենթադրել նախկինում դրսևորված կոռուպցիոն գործոնի վերարտադրում: Մինչդեռ էլեկտրոնային կենսաթոշակի գործերի համակարգը միացված է բնակչության պետական ռեգիստրին և համապատասխան տեխնիկական կարգավորումների դեպքում ինքնաշխատ եղանակով կարող է ստանալ կենսաթոշակ ստացողի վերահաշվառման վերաբերյալ ռեգիստրի տվյալները՝ ազատելով քաղաքացուն տարբեր մարմիններ դիմելու անհրաժեշտությունից:			

Կենսաթոշակային վճարումների մասով հակակոռուպցիոն միջոցառումների պլանի նախագիծ

Գործառույթ/ փուլ	Կոռուպցիոն ռիսկը	Միջոցառում	Նպատակային ցուցանիշ	Պատաս-խանատու կատարող	Իրակա-նացման ժամկետ
ՍԱԾ կենսաթոշակի տրամադրման գործընթաց					
Կենսաթոշա-կի դիմումի ներկայացում					

Կոռուպցիայի արարքի հավանականության չափանիշների և մակարդակների նկարագրության օրինակ

Հավանա-կանության մակարդակը	Հավանականության մակարդակի նկարագրությունը
4 - Հավանական	Հավանական կամ գրեթե հաստատ (արարքը կարող է կատարվել կարճաժամկետ հեռանկարում և հնարավոր է՝ նույնիսկ մի քանի անգամ) – նշանակում է, որ կոռուպցիայի արարքը կատարվել է կամ կարող է կատարվել առաջիկա մի քանի ամսվա ընթացքում և կարող է կրկնվել (ամեն ամիս, ամեն շաբաթ...):
3 – Հնարավոր	Հնարավոր (արարքը կարող է կատարվել միջնաժամկետ հեռանկա-րում) – նշանակում է, որ կոռուպցիոն արարքը կատարվել է կամ կարող է կատարվել մեկ տարվա ընթացքում և կարող է կրկնվել մի քանի անգամ:
2 - Հազվադեպ	Հազվադեպ (բացառիկ դեպքերում) - նշանակում է, որ վերջին երեք տարիների ընթացքում արարքը չի կատարվել կամ կատարվել է միայն մեկ անգամ, և հավանականություն կա, որ այն կկատարվի երեք տարվա ընթացքում:
1 - Երբեք	Երբեք – սա նշանակում է, որ արարքը չի կատարվել և դրա կատարման հավանականություն գրեթե չկա՝ գործունեության տեսակի բնույթի բերումով կամ կոռուպցիայի կանխարգելման բավարար միջոցների շնորհիվ:

Կոռուպցիոն արարքի չափանիշների և հետևանքների մակարդակների նկարագրության օրինակ

Հետևանքների մակարդակը	Հետևանքների մակարդակների նկարագրություն		
	Ֆինանսական կորուստներ	**Պատասխանատվության միջոցներ**	**Հեղինակության կորուստ**
4 - Շատ բարձր	Ֆինանսական մեծ կորուստներ (> 1 մլն դրամ)	Դատական գործընթացներ կազմակերպության կամ աշխատակիցների դեմ (քրեական և վարչական պատասխանատվություն)	Հեղինակության կորուստ բնակչության լայն շերտերի շրջանում *(երկրի առաջատար ՀԼՄ-ներում բացասական անդրադարձ և այլն)*
3 - Բարձր	Զգալի ֆինանսական կորուստներ (100 հազար - 1 մլն դրամ)	Դատական գործընթացներ աշխատակիցների դեմ (վարչական և քրեական պատասխանատվություն)	Հեղինակության կորուստ անմիջական շփման կողմերի շրջանում *(բացասական արձագանք անմիջական շփման կողմերի շրջանում)*
2 - Միջին	Աննշան ֆինանսական կորուստներ (<100 հազ. դրամ)	Վարչական և կարգապահական պատասխանատվություն	Հեղինակության կորուստ կազմակերպության աշխատակիցների շրջանում *(բացասական արձագանք հասպատության ներսում)*
1 - Աննշան	Ֆինանսական կորուստներ չեն սպասվում	Կարգապահական պատասխանատվություն	Հեղինակության կորուստ կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցների շրջանում *(բացասական արձագանք ստորաբաժանման ներսում)*

Կոռուպցիոն ռիսկերի մակարդակների գնահատման մատրից

Հավանա-կանության մակարդակ	4 - Հավանական	4	8	12	16
	3 - Հնարավոր է	3	6	9	12
	2 - Հազվադեպ	2	4	6	8
	1 - Երբեք	1	2	3	4
		1 - Աննշան	2 - Միջին	3 - Բարձր	4 - Շատ բարձր
	Հետևանքների մակարդակ				

Կոռուպցիայի ռիսկերի մակարդակների դասակարգումն իրականացվում է «հավանականության մակարդակների» և «հետևանքների մակարդակների» հատման տողերի ու սյուների վանդակներում ստացված թվային մեծությունների (բալերի) սանդղակավորմանը համապատասխան: Այսպես՝ .

12-16 – ԿՐԻՏԻԿԱԿԱՆ. Բավական հաճախ կամ գրեթե հաստատ, տեղի ունեցող կոռուպցիոն գործողություններ, որոնց հետևանքների մակարդակը բարձր է: Նման կոռուպցիոն ռիսկերը պահանջում են անհապաղ ձեռնարկել կոռուպցիայի գործոնների վերացման կամ վերահսկման միջոցներ:

6-9 – ԲԱՐՁՐ. Առկա է կոռուպցիոն արարքի բարձր հավանականություն հետևանքների բարձր մակարդակի պայմաններում, որը պահանջում է արագ ձեռնարկել կոռուպցիայի գործոնների վերացման կամ վերահսկման միջոցներ:

3-4 – ՄԻՋԻՆ. Առկա է կոռուպցիոն արարքի պոտենցիալ հնարավորություն հետևանքների միջին մակարդակի պայմաններում, որը պահանջում է որոշակի ժամանակահատվածում ձեռնարկել կոռուպցիայի գործոնների վերացման միջոցներ:

1-2 – ՓՈՔՐ. Առկա է կոռուպցիոն արարքի ոչ մեծ հավանականություն, կամ այն գրեթե հազվադեպ է՝ աննշան հետևանքներով, որը պահանջում է կատարել ռիսկերի մոնիտորինգ և անհրաժեշտության դեպքում ձեռնարկել կոռուպցիայի գործոնների վերահսկման միջոցներ:

Թեմա 4. Հանրային վերահսկողությունը և ազդարարման համակարգը

Վարժություն 5.

«Հանրային վերահսկողություն, տեղեկատվության ազատություն, ազդարարներ, իրավական պաշտպանություն» թեմայով կտրվի 4 էսսեից բաղկացած առաջադրանք, որոնց վերաբերյալ կիրականացվի դերախաղ:

Գործնական աշխատանքների գնահատականը ձևավորվելու է ներքոնշյալ առաջադրանքների գնահատման արդյունքներով.

- ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների ծրագրի» առանձին միջոցառման ակնկալվող արդյունքի օրինակով մոնիտորինգի զեկույց» թեմայով ակնարկի (Essay) ներկայացում
- «Հայաստանի հանրային կառավարման համակարգում հակակոռուպցիոն քաղաքականության ինստիտուցիոնալ մարմիններ» թեմայով անցկացված թեստային առաջադրանք
- «Կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և ազդեցության գնահատումը: Կոռուպցիոն ռիսկերի հիման վրա պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մշակումը» թեմայով խմբային աշխատանք
- «Հանրային վերահսկողություն, տեղեկատվության ազատություն, ազդարարներ, իրավական պաշտպանություն» թեմայով դերախաղ:

ՄՈԴՈՒԼ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Թեմա 1. Բարեվարքության (integrity) հայեցակարգը, տեսական մոտեցումները և հիմնական տարրերը

Վարժություն 1.

Կազմե՛ք բարեվարքության և էթիկայի համեմատական սխեմա:

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ			ԷԹԻԿԱ

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ	Կազմակերպության՝ իր գործունեությունը հաշվետվողականության, արհեստավարժության և էթիկայի նորմերի հիման վրա կազմակերպելու մշակույթն է, որը բացառում է կոռուպցիայի առկայությունը:	Հասարակության կամ նրա որևէ խավի, խմբավորման, դասակարգի և այլնի վարքուբարքի կանոնների ամբողջությունն է:	ԷԹԻԿԱ
	Սկզբունքների ներքին համակարգ է, որն առաջնորդում է մեր վարքագիծը: Բնորոշ են խրախուսանքները: Բարեվարքությունը ընտրություն է, այլ ոչ թե պարտավորություն: Թեև բարեվարքության վրա ազդեցություն ունի դաստիարակությունը, այն չի կարող պարտադրվել արտաքին աղբյուրների կողմից: Բարեվարքությունը փոխանցում է ամբողջականության և ուժի զգացողություն: Երբ մենք գործում ենք ազնիվ, մենք ճիշտ ենք վարվում, նույնիսկ այն դեպքում, երբ մեզ ոչ ոք չի հետևում:	Կանոնների և օրենքների արտաքին համակարգ է: Սովորաբար կանոններին հետևելու դեպքում խրախուսանք է կիրառվում, իսկ դրանք խախտելու դեպքում՝ պատժամիջոց: Մասնագիտական խորհուրդները կամ հանձնաժողովները հաճախ վերահսկում են դրանց պահպանումը: Շատ կազմակերպություններ մշակել են էթիկայի կանոնագրքեր, որոնց պետք է հետևեն աշխատակիցները:	
	Կարելի է սահմանել որպես ազնիվ և արդար լինելու որակ:	Կարելի է սահմանել որպես ձևավորված կանոնների և կանոնակարգերի ամբողջություն, որն անհատին հնարավորություն է տալիս աշխատելու բարոյական սկզբունքներին համապատասխան:	
	Բարեվարքությունն ունի ներքին բնույթ, իսկ էթիկան՝ արտաքին:	Էթիկան ունի արտաքին բնույթ, իսկ բարեվարքությունը՝ ներքին:	
	Բարեվարքությունը վարքագծի անձնական կոդն է, որն ավելին է, քան բուն կանոնը և արտահայտում է բարի վարքի ոգին:	Բարոյական վարքագծի սահմանված կանոնների շարք է:	

Վարժություն 2.

«ՉՈՐՍ ԱՆԿՅՈՒՆ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ[1]

Այս վարժության մասնակիցներն սկսում են վերլուծել այն գործողությունները, որոնք կարող են նախաձեռնել անհատները՝ քաղաքացիական ներգրավվածություն ապահովելու համար: Մասնակիցները կարող են դիտարկել այն գործողությունները, որոնք այդ պահին կատարում են կամ կցանկանան կատարել ապագայում՝ ընտրելով չորս գործողություններից մեկը: Սեփական պատասխանները վերլուծելիս և իրենց

[1] «Ներգրավված քաղաքացի» դասախոսի ձեռնարկ. մշակվել է Ընտրական համակարգերի միջազգային հաստատության «ԱՅ ԷՖ Ի ԵՍ»-ի կողմից՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ:

ընկերների ընտրության հիմնավորումները լսելիս նրանք հաշվի են առնում ընտրության դրական և բացասական կողմերը: Ուսուցման այս մեթոդի միջոցով մասնակիցները ձեռք են բերում տարբեր հմտություններ, ինչպես օրինակ՝ արտահայտել սեփական տեսակետը, լսել ուրիշների տեսակետները, համագործակցել՝ դիրքորոշումներ ձևակերպելու և դիրքորոշումները գնահատելու նպատակով: Կարող են նաև զարգանալ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են քաղաքավարությունը, տարբեր տեսակետներ լսելու և հաշվի առնելու պատրաստակամությունը, տեսակետների բազմազանության նկատմամբ հարգանքը և այն գիտակցությունը, որ հանրային խոսույթը կարող է հանգեցնել խնդիրների ավելի լավ ընկալման: Վարժության համար նախատեսված է 35-55 րոպե՝ կախված հարցերի քանակից և մտորումների ու լսարանային քննարկման համար հատկացված ժամանակից:

Վարժության նպատակն է՝

1. դիտարկել անհատական գործողությունների դրական ու բացասական կողմերը՝ քաղաքացիների ներգրավվածության ապահովման համար,
2. ներկայացնել ընտրությունների և գործողությունների վերաբերյալ սեփական հիմնավորումները,
3. լսել և հաշվի առնել այլոց տեսակետները:

Նախապատրաստում վարժությանը

Լսարանի չորս անկյուններում տեղադրեք ցուցանակներ, որոնցից յուրաքանչյուրի վրա հստակ գրված կլինի ընտրության առաջարկվող տարբերակներից մեկը: Այս վարժության համար առանձնացվել է քաղաքացիական ներգրավվածության չորս մեթոդ. ***քվեարկել, առաջադրվել պետական պաշտոններում, սեփական տեսակետները ներկայացնել պետական պաշտոնյաներին, զբաղվել ինքնակրթությամբ հանրային հարցերի վերաբերյալ:***

Վարժություն 3.

ԷԹԻԿԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննարկումներ փոքր խմբերում. այս մեթոդը նախատեսում է հիմնախնդրի քննարկման նպատակով ժամանակավոր թիմերի՝ փոքր խմբերի ձևավորում, որոնք սահմանափակ ժամանակի ընթացքում պետք է համատեղ ձևակերպեն առաջադրված իրավիճակային խնդիրների պատասխանները:

Մասնակիցներին բաժանել 4 խմբի՝ A, B, C, D:

Քայլ 1.

Նկարագրել իրական դեպքեր հայաստանյան իրականությունից՝ օգտագործելով հետևյալ արտահայտությունները՝ «Ես իրավաբան եմ, վարչության պետ..., Իմ պարտականությունն է/գործառույթն է..., Երեկ, անցած շաբաթ... ես պարզեցի, նկատեցի, որ...»

Պետք է գրել նախ թղթի, ապա ֆլիպչարթի վրա:

20-25 րոպե

Քայլ 2.

Նախորդ խմբի նկարագրած դեպքը վերլուծել, լուծումներ գտնել

25 րոպե

ա) կարդալ դեպքի նկարագրությունը,

բ) որոշել, թե ովքեր են անմիջական և ոչ անմիջական շահագրգիռ անձինք,

գ) վերլուծել շահագրգիռ անձանց շարժառիթները/հետաքրքրվածությունը,

դ) գտնել հինգից ավելի լուծում (օրինակ՝ ոչինչ չանել, խոսել գործընկերոջ հետ, խոսել ղեկավարի հետ, դիմել իրավապահ մարմիններին և այլն),

Քայլ 3.

Ընտրել լավագույն լուծումը և հիմնավորել ընտրությունը

10 րոպե

ա) հաջորդ խմբին փոխանցել դեպքի նկարագրությունն ու վերլուծությունը,

բ) կարդալ դեպքի նկարագրությունը և վերլուծությունը,

գ) ընտրել լավագույն լուծումը,

դ) ընտրված լուծումը հիմնավորել փաստարկներով:

Մասնակիցների հնարավոր արձագանքը՝

- **անհամաձայնություն**
- **քննարկում**
- **փաստարկում:**

Քայլ 4.

Գնահատել և ավարտել

5 րոպե

Աշխատանքի ավարտին դասախոսը որոշում է, թե ով պետք է հանդես գա յուրաքանչյուր խմբի անունից կամ ներկայացնի կոլեկտիվ լուծումը, այսինքն՝ ընտրում է խմբերի «խոսնակներին»:

Խոսնակների ելույթներից հետո դասախոսը հանդես է գալիս «դատավորի» դերում և վերջնական որոշում է կայացնում: Հարկ է նշել, որ փոքր խմբերում անցկացված քննարկումների (իրավիճակային վերլուծության) գործընթացում կարևորը ոչ այնքան վերջնական արդյունքն է, որքան ունկնդիրների կողմից որոշումների որոնումը, երբ նրանք ինքնուրույն զարգացնում են իրենց մասնագիտական ունակությունները:

Գնահատել և հաշվի առնել՝

- իրավական կարգավորումները,
- շահագրգիռ անձանց շարժառիթները,
- բարոյական/էթիկայի չափանիշները:

Գնահատել 1-5 միավորով.

- 1 միավոր - լուծումը ճիշտ չէ և խախտում է օրենքը,
- 2 միավոր - ոչ հիմնավոր լուծում է տրվել, և ներգրավված կողմերը տուժել են, ուստի դժգոհ են,
- 3 միավոր - օրենքի տեսակետից լուծվել է, բայց դեռևս դժվարություններ կան,
- 4 միավոր - օրինական է, վերջնական լուծում է տրվել, բոլոր կամ հիմնական կողմերը համաձայն են լուծման հետ,
- 5 միավոր - բոլոր կողմերը բավարարված են:

Գործողությունների գնահատում.
եթե կասկածում եք՝ ինչպես վարվել, հարցրեք ինքներդ ձեզ.



Թեմա 2. Վարքագծի հիմնական սկզբունքները, վարքագծի կանոնները և կանոնագրքերը, դրանց մեկնաբանությունները և կառավարման գործիքակազմերը

Վարժություն 4.

Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում (որոնում).

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքը (ձախ սյունակում) գծով միացրեք իր սահմանման հետ (աջ սյունակում):

Հանրությանը ծառայելու գիտակցումը	Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են ցուցաբերում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս:
Հավատարմությունը հանրային շահին	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների լիազորությունների իրականացումն ուղղված է ՀՀ քաղաքացիների և հանրության բարօրության ապահովմանը՝ պետության քաղաքականության նպատակների արդյունավետ իրագործման միջոցով:
Բարեկրթությունը	Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս դրսևորում են անկողմնակալություն՝ բացառելով որևէ խտրականություն:
Բարեխղճությունը	Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս գործում են ազնիվ և բարեխիղճ:
Հարգալիրությունը	Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հանրային ռեսուրսներն օգտագործում են արդյունավետ և խնայողաբար:
Բարեխղճությունը	Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հարգում են իրենց վերադասների, անմիջական ղեկավարների, գործընկերների, ենթակաների արժանապատվությունը:
Օբյեկտիվությունը	Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորությունները գործադրում են ի շահ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և հանրության: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները մշակված հանրային քաղաքականության կենսագործման գործընթացում դրսևորում են հավատարմություն և հուսալիություն՝ անկախ համոզմունքից և դիրքորոշումից:
Օբյեկտիվությունը	Հանրային ծառայողը, ծառայության առանձնահատկություններին համապատասխան, ծառայողական պարտականությունները կատարելիս քաղաքականապես չեզոք է: Հանրային ծառայողը ծառայողական պարտականությունները կատարելիս իրավունք չունի կրելու կուսակցական պատկանելությունը խորհրդանշող նշաններ:

Վարժություն 5.
Վարքագծի սկզբունքները

Չնայած բարդ իրավիճակներում բացարձակապես ճիշտ կամ միանգամայն սխալ պատասխան լինել չի կարող, այսուհանդերձ, առավել ճիշտ որոշում ընդունելու մեզ օգնում են հիմնարար արժեքները և սկզբունքները: «Պետական կառավարման մարմինների ծառայողների վարքագծի սկզբունքները» և այս ուսումնական նյութը մշակվել են նման իրավիճակների համար: Ձեզ կարող են օգնել նաև կազմակերպությունում գործող վարքագծի կանոնները, չափորոշիչները և այլ սկզբունքներ ու ընթացակարգեր: Առօրյա կյանքում արժեքների կիրառումը և խրախուսումը էթիկայի մշակույթ ձևավորելու ամենաարդյունավետ եղանակն է: Մենք կարող ենք ակնկալել օրինակելի կազմակերպությունում ունենալ այնպիսի աշխատանք, որը ոչ միայն անձնական բավարարվածություն կտա մեզ, այլև վստահություն, որ մենք պատահական չենք հայտնվել այդ աշխատավայրում:

Օրինակներ

1. Նախարարության վարչության պետը ռեստորանում բղավում է իր գործընկերոջ վրա և անվայել բառեր օգտագործում: Նախկինում նա նման վարքագիծ չի դրսևորել: Նա ամաչում է իր վարքից և անկեղծ ներողություն խնդրում: Սա առանձին դեպք է: Անշուշտ, սա վատ է անդրադառնում տվյալ վարչության պետի հեղինակության վրա, բայց հասարակությունն ընդունում է, որ բարոյական նորմերը մշտապես պահպանող և հարգող ցանկացած անձ, ցավոք, կարող է դուրս գալ բարոյական նորմի շրջանակից:

2. Նախարարության վարչության պետը պարբերաբար բարձր տոնով և վիրավորական արտահայտություններով է խոսում իր գործընկերների հետ հասարակական վայրերում: Նրա վարքագիծը մեծապես մտահոգում է գործընկերներին և հանրության ականատես անդամներին: Այսուհանդերձ, նախարարության վարչության պետը հրաժարվում է ներողություն խնդրել իր վարքագծի համար կամ ջանալ ուղղել այն: Բայց հասարակությունը կարծում է, որ մարդիկ պետք է ըմբռնեն հասարակական վայրերում ողջամտորեն գործելու և մյուսներին չսպառնալու կամ անհարկի ճնշման չենթարկելու անհրաժեշտությունը, քանի որ սա բարոյական նորմ է:

3. Նախարարի ընտանիքը ցանկանում է ստանալ աջակցություն պետական կազմակերպությունից: Նախարարը նամակ է գրում տվյալ կազմակերպության ղեկավարին՝ օգտագործելով նախարարի համար սահմանված ձևաթուղթը: Նա հորդորում է պաշտոնյային հաստատել իր դիմումը:

4. Նախարարը լրացնում է դիմումի ձևը՝ պետական կազմակերպությունից իր ընտանիքի համար աջակցություն ստանալու նպատակով: Ուղեկցող գրության հետ միասին նա դիմումն ուղարկում է այն պաշտոնյային, որի անունը նշված է դիմումում: Նա

գրությունն ուղարկում է իր տան հասցեից՝ ծրարի վրա գրելով միայն ազգանունը և չնշելով իր պաշտոնը:

5. Նախարարը գնում է պետական պաշտոնյայի սենյակ: Նա պահանջում է, որ պաշտոնյան անմիջապես իր հետ այցելի շինարարական աշխատանքների վայր: Պաշտոնյայի ստորադասների ներկայությամբ նա մեղադրում է պաշտոնյային սուտ խոսելու և ոչ պրոֆեսիոնալ լինելու մեջ: Նա վիրավորական խոսքեր է ասում պաշտոնյայի անցյալի ու ընտանիքի մասին՝ խոսելով բարձր տոնով:

6. Նախարարը նախապես պայմանավորված հանդիպում է ունենում պետական պաշտոնյայի հետ: Հանդիպման ժամանակ նա ստույգ նշում է շինարարական աշխատանքներից իր դժգոհ լինելու պատճառները՝ հավելելով, որ աշխատանքների կատարումը պատշաճ կամ արդյունավետ չի ղեկավարվում: Նա չի ընդունում պաշտոնյայի պատասխաններից մի քանիսը և առաջարկում է միասին գնալ շինարարական հրապարակ: Նախարարն արտահայտում է իր հստակ ու վճռական կարծիքը՝ չկորցնելով ինքնատիրապետումը կամ չփորձելով սպառնալ կամ վախեցնել պաշտոնյային:

7. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը որոշել է բյուջեի հաշվին «լավություն» անել համագյուղացիներին «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով. 2019 թվականի առաջին կիսամյակի համար նախատեսված պետական հատկացումների կեսից ավելին երկու ամսում բաժանել է այսպես կոչված «անապահով» բնակիչներին: Շուրջ 150 քաղաքացի այդ ծրագրով ստացել է 30-ից մինչև 250 հազար դրամ աջակցություն: Օգնություն ստացած քաղաքացիների ցանկի նախնական ուսումնասիրությունից պարզվել է, որ գումար են ստացել մարդիկ, որոնք չպետք է ստանային: Այսինքն՝ այդ ցանկում ընդգրկված քաղաքացիների մեծ մասը չեն համապատասխանում կառավարության սահմանած «անապահովության» չափորոշիչներին: Ավելին, այդ ցանկում կան նույնիսկ գործարարների անուններ:

Պատասխաններ

1. Նախարարության վարչության պետը ռեստորանում բղավում է իր գործընկերոջ վրա և անվայել բառեր օգտագործում: Նախկինում նա նման վարքագիծ չի դրսևորել: Նա ամաչում է իր վարքից և անկեղծ ներողություն է խնդրում: Սա առանձին դեպք է: Անշուշտ, սա վատ է անդրադառնում նախարարության վարչության պետի հեղինակության վրա, բայց հասարակությունն ընդունում է, որ բարոյական նորմերը մշտապես պահպանող և հարգող ցանկացած անձ, ցավոք, կարող է դուրս գալ բարոյական նորմի շրջանակից:

Հետևաբար, տվյալ դեպքը չի կարելի համարել էթիկայի կանոնի խախտում:

2. Նախարարության վարչության պետը պարբերաբար բարձր տոնով և վիրավորական արտահայտություններով է խոսում իր գործընկերների հետ հասարակական վայրերում: Նրա վարքագիծը մեծապես մտահոգում է գործընկերներին և հանրության ականատես անդամներին: Այսուհանդերձ, նախարարության վարչության պետը հրաժարվում է ներողություն խնդրել իր վարքագծի համար կամ ջանալ ուղղել այն: Բայց

հասարակությունը կարծում է, որ մարդիկ պետք է ըմբռնեն հասարակական վայրերում ողջամտորեն գործելու և մյուսներին չսպառնալու կամ անհարկի ճնշման չենթարկելու անհրաժեշտությունը, քանի որ սա բարոյական նորմ է:

Շարունակաբար կրկնվող նման վարքագիծը ենթադրում է, որ նախարարության վարչության պետը չի ենթարկվում հասարակության բարոյական նորմերին և դա անում է գիտակցաբար, **ուստի, կարելի է ասել, որ նա թույլ է տալիս էթիկայի կանոնի խախտում:**

3. Նախարարի ընտանիքը ցանկանում է ստանալ աջակցություն պետական կազմակերպությունից: Նախարարը նամակ է գրում տվյալ կազմակերպության ղեկավարին՝ օգտագործելով նախարարի համար սահմանված ձևաթուղթը: Նա հորդորում է պաշտոնյային հաստատել իր դիմումը:

Այս դեպքը էթիկայի կանոնի խախտում է:

4. Նախարարը լրացնում է դիմումի ձևը՝ պետական կազմակերպությունից իր ընտանիքի համար աջակցություն ստանալու նպատակով: Ուղեկցող գրության հետ միասին նա դիմումն ուղարկում է այն պաշտոնյային, որի անունը նշված է դիմումում: Նա գրությունն ուղարկում է իր տան հասցեից՝ ծրարի վրա գրելով միայն ազգանունը և չնշելով իր պաշտոնը:

Այս դեպքը չի կարող համարվել էթիկայի կանոնի խախտում:

5. Նախարարը գնում է պետական պաշտոնյայի սենյակ: Նա պահանջում է, որ պաշտոնյան անմիջապես իր հետ այցելի շինարարական աշխատանքների վայր: Պաշտոնյայի ստորադասների ներկայությամբ նա մեղադրում է պաշտոնյային սուտ խոսելու և ոչ պրոֆեսիոնալ լինելու մեջ: Նա վիրավորական խոսքեր է ասում պաշտոնյայի անցյալի ու ընտանիքի մասին՝ խոսելով բարձր տոնով:

Նման վարքագիծը կարող է դիտվել որպես պաշտոնյայի նկատմամբ ոչ հարգալից վերաբերմունքի ցուցաբերում:

6. Նախարարը նախապես պայմանավորված հանդիպում է ունենում պետական պաշտոնյայի հետ: Հանդիպման ժամանակ նա ստույգ նշում է շինարարական աշխատանքներից իր դժգոհ լինելու պատճառները՝ հավելելով, որ աշխատանքների կատարումը պատշաճ կամ արդյունավետ չի ղեկավարվում: Նա չի ընդունում պաշտոնյայի պատասխաններից մի քանիսը և առաջարկում է միասին գնալ շինարարական հրապարակ: Նախարարը արտահայտում է իր հստակ ու վճռական կարծիքը՝ չկորցնելով ինքնատիրապետումը կամ չփորձելով սպառնալ կամ վախեցնել պաշտոնյային:

Կարելի է ասել, որ սա համապատասխանում է այն անձի նկատմամբ հարգալից վերաբերմունք ցուցաբերելու մասին էթիկայի կանոնի պահանջին, որի հետ նախարարը շփվում է իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս:

7. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը որոշել է բյուջեի հաշվին «լավություն» անել համագյուղացիներին «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով. 2019 թվականի առաջին կիսամյակի համար նախատեսված պետական հատկացումների կեսից ավելին երկու ամսում բաժանել է այսպես կոչված «անապահով» բնակիչներին: Շուրջ 150 քա-

ղաքացի այդ ծրագրով ստացել է 30-ից մինչև 250 հազար դրամ աջակցություն: Օգնություն ստացած քաղաքացիների ցանկի նախնական ուսումնասիրությունից պարզվել է, որ գումար են ստացել մարդիկ, որոնք չպետք է ստանային: Այսինքն՝ այդ ցանկում ընդգրկված քաղաքացիների մեծ մասը չեն համապատասխանում կառավարության սահմանած «անապահովության» չափորոշիչներին: Ավելին, այդ ցանկում կան նույնիսկ գործարարների անուններ:

Այս դեպքը կարելի է համարել հանրային միջոցների անբարեխիղճ օգտագործում կամ չարաշահում:

Վարժություն 6.

Խմբային քննարկման համար նախատեսված՝ էթիկայի խնդիրներին առնչվող դեպք

Մարիամն աշխատում է պետական գործակալությունում և պատասխանատու է կարևոր ծրագրի համար, որը միտված է բարձրացնելու հանրային իրազեկվածության մակարդակը որոշակի հրատապ սոցիալական խնդրի վերաբերյալ: Մարիամը հանրային կապերի խորհրդատուի երկարաժամկետ թափուր պաշտոնի մրցույթ է հայտարարում: Խորհրդատուն առանցքային դեր է կատարելու ծրագրում և շատ բարձր աշխատավարձ է ստանալու:

Մարիամը բազմաթիվ դիմումներ է ստանում, քանի որ պաշտոնն իսկապես գայթակղիչ է: Դիմումներն ուսումնասիրելիս նա տեսնում է, որ դիմամատուների թվում է նաև իր գործակալության տնօրենի եղբայրը: Վերջինս քիչ թե շատ համապատասխանում է թափուր պաշտոնի պահանջներին, բայց լավագույնը չէ: Ընտրությունը Մարիամը միայնակ չի կայացնելու, սակայն նրա՝ որպես ծրագրի ղեկավարի դիրքորոշումը վճռորոշ կարող է լինել: Մարիամը խիստ մտահոգ է ստեղծված իրավիճակի պատճառով, քանի որ այդ պահին նրա կարիերան մեծապես կախված է տնօրենից: Նա, բնականաբար, չի ցանկանում, որ իր և տնօրենի միջև լարվածություն առաջանա: Միաժամանակ համոզված չէ, որ ուրիշ մեկի ընտրելով՝ թշնամական հարաբերություններ չի ստեղծի: Մարիամն այդ գործակալությունում բավական երկար չի աշխատել, որպեսզի տնօրենին լավ ճանաչի և հասկանա՝ ինչ կարող է ակնկալել:

Քննարկման հարցեր

Պատկերացրեք, որ նման իրավիճակ ստեղծվել է Հայաստանում: Մասնավորապես ինչ օրենքներ (օրինակ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքը) և կարգավորումներ պետք է կիրառվեն այս գործի առնչությամբ:

- Առաջարկե՛ք գործողությունների մի քանի հնարավոր տարբերակներ, որոնք հանրային ծառայողը կարող է ձեռնարկել:
- Ո՞րը կլինի լավագույն այլընտրանքը (ի լրումն օրենքների՝ հաշվի առեք ցանկացած կիրառելի կանոնագիրք, բարոյական նորմ, նպատակահարմար լինելու վերաբերյալ ներքին զգացողությունը, Մարիամի՝ աշխատանքային առաջընթացի հետ կապված նպատակները, նրա գործընկերների և հանրության բոլոր հնարավոր արձագանքները):

- Ի՞նչ հնարավոր հետևանքներ կարող է առաջացնել այս իրավիճակը Մարիամի համար:
- Ի՞նչ քայլեր կարող է ձեռնարկել Մարիամը վտանգը նվազեցնելու համար:

Վարժություն 7.

Խմբային քննարկման համար նախատեսված՝ էթիկայի խնդիրներին առնչվող դեպք

Նախարարության պաշտոնատար անձ Էդուարդը, որը աշխատաժողովների մասնակցելու նպատակով պարբերաբար գործուղումների է մեկնում Բրյուսել և այլ եվրոպական քաղաքներ, ճամփորդական գործակալությունից առաջարկ է ստանում մասնակցելու Վիեննայի ուղղությամբ չվերթի բացման արարողությանը: Տվյալ պաշտոնյան այս գործակալության ծառայություններից օգտվել է պաշտոնական այցերի նպատակով և միայն մեկ անգամ՝ մասնավոր նպատակով: Հրավիրատոմսում ասվում է, որ արարողությանը հրավիրված են միայն ճամփորդական գործակալության ամենահավատարիմ հաճախորդները: Հրավերն ակնհայտորեն արվել է ոչ պաշտոնատար անձին, և դժվար է այնտեղ քողարկված մտադրություն տեսնել:

Չվերթի բացման արարողությունից բացի, ծրագիրը ներառում է նաև բիզնես դասի երկկողմանի տոմսեր դեպի Վիեննա, լիարժեք սնունդ, սենյակ հինգաստղանի հյուրանոցում և ընդունելություն Վիեննայի համերգասրահներից մեկում: Բոլոր ծախսերը հոգում է ճամփորդական գործակալությունը:

Այս գործակալության ծառայություններից օգտվելու ընտրությունը Էդուարդն արել է մասամբ այն պատճառով, որ նման հարմարավետ ծառայություններ տրամադրող գործակալությունները շատ չեն: Այս գործակալության գներն էլ միշտ համահունչ են եղել ընդհանուր շուկայական գներին: Նախարարությունը, որտեղ աշխատում է Էդուարդը, այս ճամփորդական գործակալության հետ, գործուղումներից բացի, որևէ այլ գործնական կապ չի ունեցել: Էդուարդի աշխատավարձը շատ բարձր չէ, և առաջարկված ուղևորությունը շատ գայթակղիչ է աշխատասեր պաշտոնյայի համար, որը հազվադեպ կարող է հանգստի նպատակով իրեն նման ուղևորություն թույլ տալ:

Կազմվել է մասամբ Էստոնիայում իրականացված վերապատրաստման ծրագրի գործերից մեկի հիման վրա, որը հրապարակվել է ՏՀԵԿ-ի հակակոռուպցիոն ցանցում և SIGMA-ում 2013 թ.՝ «Էթիկայի վերաբերյալ վերապատրաստում պաշտոնատար անձանց համար», էջ 35

http://www.oecd.org/site/sigma/publicationsdocuments/EthicsTrainingforPublicOfficials_11Feb2013.pdf

Քննարկման հարցեր

● Պատկերացրեք, որ նման իրավիճակ ստեղծվել է Հայաստանում: Մասնավորապես ինչ օրենքներ (օրինակ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքը) և կարգավորումներ պետք է կիրառվեն այս գործի առնչությամբ:

● Առաջարկե՛ք գործողությունների մի քանի հնարավոր տարբերակներ, որոնք հանրային ծառայողը կարող է ձեռնարկել:

● Ո՞րը կլինի լավագույն այլընտրանքը (ի լրումն օրենքների՝ հաշվի առե՛ք ցանկացած կիրառելի կանոնագիրք, բարոյական նորմ, նպատակահարմար լինելու վերաբերյալ ներքին զգացողություն, Էդուարդի՝ աշխատանքային առաջընթացի հետ կապված նպատակները, նրա գործընկերների և հանրության բոլոր հնարավոր արձագանքները):

● Արդյոք որևէ բան կփոխվե՞ր, եթե Էդուարդի անմիջական ղեկավարը թույլ տար, որ վերջինս գնար ճանապարհորդության:

Վարժություն 8.
Վարքագծի կանոնագրքի հավելյալ արժեքը
Դեպքի ուսումնասիրություն. ֆուտբոլային խաղի տոմսեր[2]

Պատկերացրեք, որ ձեր գործընկերը պատասխանատու է բիզնես արտոնագիր կամ թույլտվություն տրամադրելու համար: Մի անգամ ֆուտբոլի տեղական թիմի սեփականատերը գալիս է նրա մոտ՝ իր գործունեության լիցենզիան թարմացնելու համար: Գործարարը ֆուտբոլային հաջորդ խաղի երկու տոմս է դնում ձեր գործընկերոջ սեղանին: Ֆուտբոլային տոմսը նախատեսված է VIP սրահի համար:

Ձեր գործընկերը մտածում է. պե՞տք է արդյոք պահպանել տոմսերը՝ ապացուցելու համար, որ գործարարը ոչ պատշաճ վարքագիծ է դրսևորել: Ի՞նչ օգուտ կարող է տալ ձեր գործընկերոջը **վարքագծի կանոնագիրքը**՝ այս իրավիճակից դուրս գալու ճիշտ ելք գտնելու համար:

Վարքագծի կանոնագիրքը *կարող է՝*

- ցույց տալ մեկ փաստաթղթում, թե ինչ է սպասվում ձեզնից,
- կանխել սխալ կարգապահական տույժը՝ որպես հանրային ծառայողների վրա ոչ պատշաճ ճնշում գործադրելու և աշխատանքից ազատելու միջոց,
- օգնել խուսափելու անախորժություններից,
- օգնել պաշտպանվելու ոչ պատշաճ առաջարկներից,
- ցույց տալ, թե ինչպես կարող եք հանգուցալուծել ձեզ համար բարդ իրավիճակը,
- բարձրացնել հեղինակությունը հանրության առջև,
- խնայել այն ժամանակը, որը կարող է ծախսվել կառավարչական սխալ որոշումները շտկելու և բողոքները վերլուծելու վրա,
- ստեղծել հանրային ծառայության այնպիսի համակարգ, որը կտարբերվի աշխատանքային այլ վայրերից,
- դառնալ ամուր հիմք հանրային ծառայողների վերապատրաստման համար,
- ապահովել գործատուի հավասար վերաբերմունքը բոլոր ծառայողների նկատմամբ:

[2] Տե՛ս Основные понятия и концепции антикоррупционной деятельности. Учебное пособие. Council of Europe, 2015, 80-81 с., https://rm.coe.int/-/16806eed0c

Վերոնշյալ օրինակում **վարքագծի օրինակելի կանոնագիրքը** կարող է տալ հետևյալ պատասխանը.

«Եթե հանրային ծառայողին առաջարկվում է ոչ պատշաճ համարվող առավելություն, ապա նա ինքնուրույն պաշտպանվելու համար պետք է ձեռնարկի հետևյալ քայլերը.

- հրաժարվել ոչ պատշաճ համարվող առավելությունից. կարիք չկա այն ընդունելու, որպեսզի այն հետո չօգտագործվի որպես ապացույց,
- փորձել հասկանալ տվյալ առաջարկը կատարած անձի էությունը,
- խուսափել այդ անձի հետ երկարատև շփումից, միաժամանակ փորձել ճշտել այդ առաջարկության պատճառը, ինչը կարող է ծառայել որպես ապացույց,
- եթե նվերը հնարավոր չէ մերժել կամ վերադարձնել, ապա այն պետք է պահել, իսկ նվիրողին դիմել հնարավորինս քիչ, միայն խիստ անհրաժեշտության դեպքում,
- հնարավորության դեպքում վկաների կանչել, օրինակ՝ հարևան սենյակներում աշխատող գործընկերներին,
- որքան հնարավոր է շուտ պատրաստել գրավոր հաշվետվություն տեղի ունեցածի վերաբերյալ, ցանկալի է՝ ծառայողական նոթատետրում,
- անհաջող փորձի մասին որքան հնարավոր է շուտ զեկուցել անմիջական ղեկավարին կամ պարզապես իրավապահ մարմիններին,
- շարունակել աշխատել սովորական ռեժիմով, մասնավորապես այն հարցի շուրջ, որի վերաբերյալ առաջարկվել է ոչ պատշաճ համարվող առավելություն»:

Ի՞նչ կարծիքի եք այս մոտեցման մասին:

Վարժություն 9.
Էթիկայի հետ կապված փոփոխությունների անհրաժեշտություն

Դուք պետք է համոզեք Ձեր ղեկավարին, որ Ձեր կազմակերպությունում էթիկայի հետ կապված փոփոխությունների անհրաժեշտություն կա:

Օրինակ՝ խումբը որոշում է ստեղծել **վարքագծի կանոնագիրք/ուղեցույց,** ընտրում է անհրաժեշտ գործիքները և որոշում, թե ինչպես է կազմվելու ուղեցույցը:

Կարելի է ստեղծել 4-5 մասնակցից բաղկացած չորս խումբ, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է մեկ դերախաղ: Մասնակիցներին պետք է բացատրել, որ էթիկայի մշակույթը բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ վերադասը/ղեկավարը այսպիսի վարքագծի ջատագով լինի:

Բացատրե՛ք հանձնարարությունը. մասնակիցներից մեկը ստանձնում է վերադասի/ղեկավարի դերը: Յուրաքանչյուր խումբ ընտրում է մեկ անձի, որը, օգտագործելով վերապատրաստման ընթացքում սովորած գիտելիքները, 5 րոպեանոց ելույթ է ներկայացնում վերադասին/ղեկավարին՝ վերջինիս համոզելու համար, որ անհրաժեշտ է ավելի մեծ ակտիվություն ցուցաբերել էթիկայի կանոններին հակասող վարքագծի դեմ պայքարի հարցում թե՛ իր աշխատանքում, թե՛ կազմակերպության մասշտաբով: Սա ներկայացման փուլն է և տևում է 20 րոպե:

Ներկայացնողի ելույթին հաջորդում է արձագանքման փուլը, որն ունի իր պատասխանատուն: Այս փուլում պարզ է դառնում, թե՝

1. ինչ կարծիքի է ներկայացնողը իր ելույթի մասին,
2. ինչ կարծիքի են մյուս մասնակիցները,
3. ինչ կարծիքի է վերադասը/ղեկավարը:

Արձագանքի փուլը տևում է 10 րոպե:

Բոլոր չորս խմբերը ներկայացնում են իրենց ելույթները, որոնցից յուրաքանչյուրն արժանանում է արձագանքի: Գնահատողը կլինի վերադասի/ղեկավարի դերը կատարող անձը՝ արձագանքի փուլի պատասխանատուի հետ միասին:

Վերջում վերադասը/ղեկավարը հանդես է գալիս եզրափակիչ խոսքով: Նա մի քանի րոպե տրամադրում է ընդհանուր դասընթացի ամփոփմանը, ապա հայտնում, թե որ խումբն է հաղթել և հանձնում է մրցանակը: Մրցանակ է ստանում լավագույն ելույթ ներկայացրած խումբը: Ցանկալի է, որ մրցանակը կապված լինի դասընթացի թեմայի հետ:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ՄՈԴՈՒԼԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԹԵՄԱՆԵՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ՍՏՈՒԳՈՂ

Անուն, ազգանուն, հայրանուն _____

_____

(ստորագրություն)

«_____» _____ 2022 թ.
(օրը, ամիսը, տարին)

Թեստային առաջադրանքը կազմված է 20 հարցից: Տևողությունը՝ 60 րոպե: Թեստում յուրաքանչյուր հարց ունի երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 1, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Սխալ պատասխաններ են համարվում ոչ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխան նշելը և որևէ պատասխան չնշելը:

Հարց 1. Որո՞նք են հանրային ծառայողների վարքագծի ուղենիշային սկզբունքները.

1. հասարակական պարտքի զգացումը, հանրությանը ծառայելու ցանկությունը,
2. հանրությանը ծառայելու գիտակցումը, հավատարմությունը հանրային շահին, բարեկրթությունը և հարգալիրությունը, բարեխղճությունը, օբյեկտիվությունը,
3. հանրային ծառայողի արհեստավարժությունը և հասարակության վստահությունը հանրային ծառայողների նկատմամբ:

Հարց 2. Վարքագծի սկզբունքների համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները՝

1. լավ տեղեկացված են Հայաստանի Հանրապետության քաղաքականության մեջ և ողջ աշխարհում տեղի ունեցած վերջին իրադարձությունների մասին,
2. հարգում են իրենց վերադասների, անմիջական ղեկավարների, գործընկերների, ենթակաների արժանապատվությունը,
3. ձեռնարկում են միջոցներ՝ ուղղված աշխատանքի անվտանգությանը և առողջության պահպանմանը,
4. անվերապահորեն հետևում են անմիջական ղեկավարի դիրքորոշմանը:

Հարց 3. Հանրային ծառայողների վարքագծի սկզբունք չի համարվում՝

1. հանրությանը ծառայելու գիտակցումը,
2. հավատարմությունը հանրային շահին,
3. բարեկրթությունը և հարգալիրությունը, բարեխղճությունը և օբյեկտիվությունը,
4. քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և կոմպետենցիաներին համապատասխան:

Հարց 4. Վարքագծի սկզբունքների համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները՝

1. պատրաստ են արտաժամյա աշխատանքի,
2. անվերապահորեն հետևում են անմիջական ղեկավարի դիրքորոշմանը,
3. ապահովում են սեփականության պահպանությունը,
4. իրենց լիազորությունները գործադրում են ի շահ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և հանրության:

Հարց 5. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են՝

1. ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով,
2. ՀՀ կառավարության որոշմամբ,
3. էթիկայի կանոններով,
4. կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

Հարց 6. Ինչպիսի՞ պատասխանատվություն կարող է առաջացնել վարքագծի կանոնների խախտումը.

1. կարգապահական,
2. քրեական,
3. վարչական,
4. կարգապահական և վարչական:

Հարց 7. Նշվածներից ո՞րը չի համարվում բարեվարքության տարր.
1. հաշվետվողականությունը,
2. կոռուպցիայի կանխարգելումը,
3. էթիկայի կանոնների պահպանումը,
4. առողջ ապրելակերպը:

Հարց 8. Նշվածներից ո՞ր իրավական ակտով են սահմանվում հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները.
1. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով,
2. ՀՀ կառավարության որոշմամբ,
3. ՀՀ վարչապետի որոշմամբ,
4. համապատասխան մարմնի ղեկավարի հրամանով:

Հարց 9. Հանրային ծառայողի համար «բարեխղճություն» սկզբունքը նշանակում է.
1. հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս դրսևորում են քաղաքական ակտիվություն,
2. հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս գործում են հանուն սեփական քաղաքական շահերի,
3. հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս գործում են ազնիվ և բարեխիղճ, ինչպես նաև հանրային ռեսուրսներն օգտագործում են արդյունավետ և խնայողաբար:

Հարց 10. Հանրային ծառայողների՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանում է՝
1. հանրային ծառայության տվյալ տեսակը ղեկավարող մարմինը,
2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը,
3. քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետը,
4. բարեվարքության հարցերով կազմակերպիչը:

Հարց 11. Հանրային ծառայողի վարքագծի կանոնները սահմանվում են վարքագծի տիպային կանոնների հիման վրա՝
1. մեթոդական ցուցումներով,
2. ուղեցույցներով,
3. չափորոշիչներով,
4. կանոնագրքերով:

Հարց 12. Ի՞նչ է ենթադրում «օբյեկտիվություն» սկզբունքը.
1. հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս դրսևորում են անկողմնակալություն՝ բացառելով որևէ խտրականություն,
2. հանրային ծառայողը, ծառայության առանձնահատկություններին համապա-

տասխան, ծառայողական պարտականությունները կատարելիս քաղաքականապես չեզոք չէ,

3. հանրային ծառայողը, ծառայության առանձնահատկություններին համապատասխան, ծառայողական պարտականությունները կատարելիս չունի սուբյեկտիվ մոտեցում և առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով,

4. հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս դրսևորում են կողմնակալություն և ազնվություն՝ բացառելով որևէ խտրականություն:

Հարց 13. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության համակարգը ներառում է՝

1. վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքը,

2. գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը,

3. առաջխաղացման և կատարողականի գնահատման համակարգը,

4. թափուր պաշտոնի համար հայտարարված մրցութային կարգը:

Հարց 14. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով սահմանվում են՝

1. պատգամավորի պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները,

2. քննիչի պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները,

3. դատախազի պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները,

4. պետական պաշտոն (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները:

Հարց 15. Քաղաքացիական ծառայողի ծառայողական ավտոմեքենան կարող է շահագործվել՝

1. տվյալ քաղաքացիական ծառայողի կողմից՝ ըստ հայեցողության,

2. տվյալ քաղաքացիական ծառայողի և նույն կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցների կողմից՝ միայն ծառայողական նպատակներով,

3. քաղաքացիական ծառայողի ընտանիքի անդամների կողմից,

4. քաղաքացիական ծառայողի վարորդի կողմից՝ անձնական նպատակներով:

Հարց 16. Քաղաքացիական ծառայողը կարող է օգտագործել իրենց ստորաբաժանման պատճենահանման սարքը՝

1. հաշվետվությունների պատճենահանման համար,

2. զավակի խնդրանքով՝ դիպլոմային աշխատանքի պատճենահանման նպատակով,

3. գործընկերոջ խնդրանքով՝ անձնական կարիքների համար,

4. կազմակերպության ղեկավարի խնդրանքով՝ անձնական կարիքների համար:

Հարց 17. Քաղաքացիական ծառայողին թույլատրվում է ծառայողական հեռախոսահամարներից զանգեր կատարել՝

1. իր ընտանիքի անդամներին,
2. քաղաքացիներին՝ անձնական գործերով,
3. այլ քաղաքացիական կամ հանրային ծառայողներին՝ ծառայողական խնդիրներով,
4. գործընկերներին՝ անձնական խնդիրներով:

Հարց 18. Նշվածներից ո՞րը չի հանդիսանում ԵՄ անդամ պետությունների կողմից կիրառվող էթիկական գործիք.

1. էթիկական արժեքների կառավարումը,
2. էթիկական աուդիտը,
3. համացանցի միջոցով հանրային ծառայողների ինքնագնահատումը,
4. շահերի բախումը:

Հարց 19. Նշվածներից ո՞րը չի համարվում բարեվարքության բաղադրիչ.

1. հանրային ծառայողի նվիրվածությունը բարձր բարոյաէթիկական չափանիշներին,
2. էթիկական վարքագծի կանոնների իմացությունը,
3. հանրային ծառայության առանցքային արժեքներով գործելու կարողությունը,
4. սեփական կարիքներից ելնելով՝ մարդկանց հետ անընդհատ շփման պատրաստակամությունը:

Հարց 20. Ընտրե՛ք ճիշտ տարբերակը.

1. Բարեվարքությունն ունի ներքին բնույթ, իսկ էթիկան՝ արտաքին:
2. Բարեվարքությունն ունի արտաքին բնույթ, իսկ էթիկան՝ ներքին:
3. Էթիկայի դերն ավելի մեծ է, քան բարեվարքության:

Թեմա 3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախում: Անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, նվերների ընդունման արգելք:

Վարժություն 10.

- *Շահերի բախման, անհամատեղելիության* պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքի յուրաքանչյուր տեսակին համապատասխան գործնական օրինակների (դեպքերի) դուրսգրում ՀՀ մամուլի հրապարակումներից կամ սոցիալական ցանցերից:
- Առանձնացված խմբային քննարկումներ լսարանում:
- Քննարկման արդյունքների ներկայացում՝ շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքի օրենսդրորեն սահմանված դրույթներին համապատասխանության տեսանկյունից:
- Խմբի կողմից առաջարկությունների մշակում՝ բացահայտված շահերի բախման կամ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքի իրավիճակների կառավարման կամ լուծման գործիքակազմերի կիրառման տեսանկյունից:

Այս առաջադրանքը կարելի է ձևակերպել նաև որպես խմբային «դեպքերի ուսումնասիրություն» տնային աշխատանք կամ որպես թեստ:

Շահերի բախում

Դեպքի նկարագրություն 1.

Բաժնի ղեկավարի Ձեր գործառույթից ելնելով՝ Դուք պետք է հանդես գաք որպես քաղաքացիական ծառայողի թափուր հաստիքի ընտրության հանձնաժողովի նախագահ:

Ձեր ղեկավարած բաժնում առկա թափուր հաստիքի համար դիմած թեկնածուներից մեկը Ձեր հարազատն է, որը նախարարության աշխատակից չէ: Այդ մասին կազմակերպության մրցութային հանձնաժողովի մյուս անդամներին հայտնի չէ: Դուք որոշում եք այդ մասին ամբողջությամբ չտեղեկացնել մրցութային հանձնաժողովի մյուս անդամներին, այլ միայն ասել, որ ճանաչում եք թեկնածուին, ինչպես նաև չմասնակցել գնահատման գործընթացին, սակայն որպես մրցութային հանձնաժողովի նախագահ՝ մասնակցել վերջնական որոշման կայացմանը:

Հարցեր

1. Արդյոք Ձեր որոշումը համապատասխանո՞ւմ է ստեղծված իրադրությանը. «այո» կամ «ոչ»:

Ինչո՞ւ մրցութային հանձնաժողովին ամբողջությամբ չեք ներկայացնում Ձեր կապակցվածությունը թեկնածուի հետ, կամ ինչո՞ւ ամբողջությամբ չեք հրաժարվում հանձնաժողովի անդամությունից:

Խնդրում ենք ցանկացած պատասխանի դեպքում շարադրել ստեղծված իրավիճակի լուծման Ձեր մեկնաբանությունը՝ համաձայն օրենսդրական կարգավորումների:

Դեպքի նկարագրություն 2.

Նախարարը, որը պատասխանատու է նախարարության շենքի պահպանման աշխատանքների մրցութային պայմանագրի ստորագրման վերջնական որոշման կայացման համար, որոշեց պայմանագիր կնքել այն ընկերության հետ, որտեղ իր որդին միջին օղակի տեխնիկական աշխատողի պաշտոն է զբաղեցնում: Գնումների գործընթացը իրականացվել է նվազագույն պահանջներով, և հիմնական որոշումը թողնվել է նախարարի հայեցողությանը:

Ստորագրելով պայմանագիրը՝ նախարարը ոչ մեկին չի զգուշացնում կամ տեղեկացնում ընկերությունում իր զավակի աշխատելու մասին՝ համարելով, որ այդ հանգամանքը չունի շահերի բախման հիմք:

Հարցեր

Արդյոք այս իրավիճակը շահերի բախման տեսանկյունից լուրջ է. «այո» կամ «ոչ»:

Ինչպե՞ս պետք է կազմակերպվեր գնումների գործընթացը, որպեսզի շահերի բախման իրավիճակ չստեղծվեր:

Դեպքի նկարագրություն 3.

Դուք նախարարության գործերի կառավարչության պատասխանատու պաշտոն-

յա եք: Նախորդ երկու տարիներին նախարարության համակարգչային տեխնիկայի մատակարար և այդ տեխնիկայի սպասարկման գործընկեր առևտրային կազմակերպությունը տանը օգտագործելու համար Ձեզ առաջարկում է համակարգիչ՝ առանց վարձատրության: Այդ անձնավորությունը ժամանակի ընթացքում դարձել է Ձեր մտերիմ ընկերը: Աշխատանքային գործունեության հետ կապված Դուք մեծ ծավալի աշխատանք եք կատարում և ստիպված եք լինում որոշ ժամանակ էլ տանը աշխատել, սակայն համակարգիչն օգտագործելու եք ինչպես պետական գործերի համար, այնպես էլ համալսարանում դասավանդման հետ կապված աշխատանքի: Դուք չեք կարող համակարգիչ ձեռք բերել սեփական միջոցներով: Ձեր ընկեր կապալառուն ասում է, որ համակարգիչը բավական հին է, ուստի այդքան էլ մեծ արժեք չունի: Նա պնդում է, որ Դուք կարող եք պահել այն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ լինի: Դուք ընդունում եք առաջարկը: Նախարարության համակարգչային տեխնիկայի սպասարկման պայմանագիրը նախատեսված է երկարաձգել առաջիկա երեք ամսվա ընթացքում, և դուք հանդիսանում եք այդ պայմանագրի մրցութային հանձնաժողովի անդամ, որը ներկայացված հայտերից որոշելու է հաղթողին:

Հարցեր

Դուք ընդունո՞ւմ եք առաջարկը ձեր ընկերոջ կողմից: Ինչո՞ւ «այո» և ինչո՞ւ «ոչ»:

Որո՞նք են այս դեպքում ձեր քայլերը՝ որպես հանրային ծառայող կամ պաշտոնյա:

Դեպքի նկարագրություն 4.

Դուք արդարադատության նախարարությունում հակակոռուպցիոն հարցերով պատասխանատու պաշտոնյա եք: Նախարարության փոխնախարարը ամբողջական պատասխանատվություն է կրում քրեական օրենսգրքում իրականացվելիք փոփոխությունների համար: Այդ հարցերում նախարարությանը խորհրդատվություն մատուցող ընկերությունից հարցնում են, թե արդյոք խնդիրներ կստեղծվեն, եթե ընկերությունը ձեր փոխնախարարին հրավիրի հարևան երկրում կայանալիք ֆուտբոլի աշխարհի գավաթի խաղարկության եզրափակիչ փուլին:

Խորհրդատուն նշում է, որ ընկերությունը կապահովի ավիատոմսերը և կացարանները, իսկ փոխնախարարը կմասնակցի նաև Ազգային ստադիոնում ընկերության կորպորատիվ հյուրընկալությանը: Այս առիթը փոխնախարարին լավ հնարավորություն կտա հանդիպելու հարևան երկրների այլ նախարարների հետ, որոնք նույնպես այնտեղ կլինեն: Փոխնախարարը շատ հետաքրքրված է ֆուտբոլով և երկրի ֆուտբոլի ազգային ֆեդերացիայի նախկին նախագահն է եղել:

Հարցեր

Արդյոք շահերի բախում կա՞ խորհրդատուի այս առաջարկի մեջ:

Եթե Ձեզ դիմեն, ի՞նչ խորհուրդ կտաք փոխնախարարին:

Դեպքի նկարագրություն 5.

Դուք հայտնաբերում եք, որ վերջին երկու տարիների ընթացքում Ձեր մտերիմ աշխատանքային ընկերը գրասենյակի դրամարկղից գողանում է փոքրարժեք պարագաներ ու դրամական միջոցներ և այդ գողությունները քողարկելու համար փոփոխում է պաշտոնական ֆինանսական հաշվետվությունները:

Նա գողացված գրասենյակային պարագաները վաճառում էր հարևան քաղաքի

շուկայում: Նախարարության հաշվապահությունը վարվում է շատ անփույթ, և ծայրահեղ վատ համակարգի պատճառով ոչ ոք չի կասկածում, որ որևէ բան սխալ է:

Ձեր ընկերը երիտասարդ է, ունի ընտանիք և հիվանդ ամուսին: Քաղաքացիական ծառայողի նրա աշխատավարձը շատ ցածր է, և նա դժվարությամբ է հոգում ընտանիքի ծախսերը:

Հարց

Առկա՞ է արդյոք շահերի բախում այս դեպքում: Հիմնավորե՛ք Ձեր տեսակետը:

Դեպքի նկարագրություն 6.

Դուք կրթության գործակալության վերահսկողություն իրականացնող պաշտոնյա եք: Դուք ստացել եք բողոք այն մասին, որ գործակալության գնումների և պայմանագրերի կնքման գործընթացներում առկա է կոռուպցիա:

Գործակալությունը ամեն ամիս տպագիր նյութերի մատակարարման համար պայմանագրերի կնքման մրցույթներ է հայտարարում: Երեք տպագրական ընկերություններ, որոնք նախկինում միշտ կատարել են գործակալության բոլոր տպագրական աշխատանքները, բարձր հեղինակություն ունեն իրենց կատարած աշխատանքի որակի և ծախսերի արդյունավետության առումով:

Ուսումնասիրության ընթացքում պարզվում է, որ գործակալության պայմանագրերի համար պատասխանատու ավագ աշխատողներից մեկի հորեղբայրը վերջերս ձեռք է բերել տեղական տպագրական բիզնես: Պայմանագրերի պատասխանատուի գործառույթներից է փոքր և միջին տպագրության պայմանագրերի մրցույթների կազմակերպումը:

Հարցումներից պարզում եք, որ մի քանի անգամ պայմանագիր է կնքվել պայմանագրերի պատասխանատուի հորեղբորը պատկանող տպարանի հետ, չնայած վերջինս նույն գինն է առաջարկել, ինչ մրցակցող մյուս ընկերությունները: Նա պատճառաբանում է, որ իր հորեղբոր ընկերությունն ավելի հուսալի է և ավելի լավ է գործն անելու:

Հարցեր

Արդյոք սա շահերի բախո՞ւմ է: Հիմնավորե՛ք Ձեր տեսակետը:

Արդյոք այս գործով առկա՞ է «պաշտոնեական դիրքի չարաշահման» երևույթ:

Անհամատեղելիության պահանջներ

Դեպքի նկարագրություն 1.

Հաշվի առնելով համայնքի ֆինանսական սղությունը՝ փոքր բնակչություն ունեցող քաղաքի քաղաքապետը առևտրային կազմակերպություն է ստեղծում և ինքն էլ ստանձնում է այդ կազմակերպության կառավարումը՝ նպատակ ունենալով ստացված միջոցներն ամբողջությամբ ուղղել քաղաքի զարգացմանը: Քաղաքապետի առևտրային կազմակերպությունը և քաղաքապետարանը համատեղ մասնակցում են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հայտարարած դրամաշնորհի մրցույթին և հաղթում են: Ծրագրի իրականացման արդյունքում զգալիորեն կբարելավվեն համայնքային ենթակառուցվածքները՝ բնակիչների համար ստեղծելով նոր հնարավորություններ:

Հարցեր

- **Արդյոք նման գործելաոճն ընդունելի՞ է քաղաքապետարանի և պաշտոնյայի**

համար: «Այո» և «ոչ» պատասխանները հիմնավորել օրենսդրական կարգավորումներով:

- **Ինչ քայլեր պետք է ձեռնարկեր Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը դրամաշնորհային մրցույթի ժամանակ:**
- **Ինչ քայլեր պետք է ձեռնարկի քաղաքապետը և քաղաքապետարանը, եթե այդ մասին հայտնի դառնա հանրությանը:**

Դեպքի նկարագրություն 2.

«Հետաքննող լրագրողների» «Հետք» էլեկտրոնային թերթը հրապարակեց «panama papers»-ի օֆշորային գոտում գրանցված մի շարք ընկերությունների վերաբերող փաստաթղթեր: Բացահայտվեց, որ Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի ստորագրությունը, որպես վարկի կարգադրիչի, առկա է մի ընկերության և բանկի միջև ֆինանսական հանձնարարության գործարքների փաստաթղթերում: Տվյալ պաշտոնյան չէր հանդիսանում այդ ընկերության տնօրեն:

Այդ փաստերի վերաբերյալ լրագրողների հարցերին պաշտոնյան հրաժարվում էր պատասխանել:

Հարցեր

- **Ո՞ր մարմնին պետք է դիմեն լրագրողները բացահայտված դեպքի և ստեղծված իրավիճակի պայմաններում:**
- **Ինչպե՞ս կգնահատեք ստեղծված իրավավիճակը՝ ըստ «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջների, ո՞ր սահմանափակումներն են խախտված հանրային պաշտոնյայի կողմից:**
- **Ինչ քայլեր պետք է ձեռնարկի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, խնդրում ենք նկարագրել:**

Դեպքի նկարագրություն 3.

Նախարարի տեղակալը, որը համակարգում է էներգետիկ ենթակառուցվածքների քաղաքականության ոլորտը, ներգրավված է «Հայկական ատոմակայան» ՊՓԲԸ կառավարման խորհրդի կազմում և ներկայացնում է առևտրային ընկերությունը միջազգային համագործակցության հանդիպումներում՝ ստորագրում արձանագրություններ, հուշագրեր և այլն: Ընկերության կառավարման խորհուրդը, հաշվի առնելով փոխնախարարի դերակատարումը և ընկերության գործունեության տարեվերջին արձանագրած բարձր ցուցանիշները, որոշում է պարգևատրել խորհրդի բոլոր անդամներին՝ յուրաքանչյուրին պաշտոնական դրույքաչափի քառապատիկի չափով:

Հարցեր

- **Ինչ օրենքներ (օրինակ՝ «Հանրային ծառայության մասին օրենքը») և կարգավորումներ պետք է կիրառվեն այս դեպքի առնչությամբ:**
- **Առաջարկե՛ք մի քանի հնարավոր գործողություն, որոնք հանրային ծառայողը (կոնկրետ դեպքում՝ փոխնախարարը) պետք է ձեռնարկի:**
- **Ինչ հետևանքներ կարող են առաջանալ փոխնախարարի համար, եթե նա չկիրառի Ձեր առաջարկած գործողությունները:**

Դեպքի նկարագրություն 4.

ԱԺ պատգամավորը, նախքան պատգամավորական մանդատ ստանալը, երկար

տարիներ զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ՝ հիմնադրել և ղեկավարում է «Կոնստրուկտոր» ՍՊԸ-ն, որն պատվերներ է կատարում փորձակոնստրուկտորական, նախագծակոնստրուկտորական աշխատանքների գծով:

Հարցեր

- **«Հանրային ծառայության մասին» օրենքի դրույթներից ելնելով՝ նկարագրեք, թե անհամատեղելիության պահանջի ինչ խախտումներ են առկա ստեղծված իրավիճակում:**
- **Ինչ քայլեր պետք է ձեռնարկի պատգամավորը՝ խուսափելու համար ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու անհամատեղելիության պահանջների խախտումներից. խնդրում ենք նկարագրել,**
- **Ինչ հետևանքներ կառաջացնեն պատգամավորի համար անհամատեղելիության պահանջների խախտումները չվերացնելու հանգամանքները:**

Այլ սահմանափակումներ

Դեպքի նկարագրություն 1.

Բարձրաստիճան պետական պաշտոնյան մեկնում է Փարիզ՝ գործուղման: Նա կարող է ճամփորդել «բիզնես դաս» կարգի տոմսով, սակայն որոշում է փոխել իր տոմսը և վերցնել երկու սովորական տոմս, որպեսզի իր կինը ևս իր հետ ճամփորդի: Երկու սովորական տոմսի արժեքը նույնն է, ինչ մեկ բիզնես դասի տոմսինը: Պաշտոնյան մտածում է, որ ոչ ոք չի իմանա տոմսերի փոխանակման մասին, և դա չի հանգեցնում ֆինանսական միջոցների կորստի:

Հարցեր

- **Կարծում եք այդպես վարվելն ընդունելի՞ է:**
- **Օրենսդրական ո՞ր կարգավորմանն է հակասում նման վարքագիծը:**
- **Ինչ քայլեր պետք է ձեռնարկի պաշտոնյան տվյալ իրավիճակի հանգուցալուծման համար:**

Դեպքի նկարագրություն 2.

Նախարարության երեսուն տարվա անբասիր աշխատանքային հեղինակություն ունեցող ֆինանսների վարչության պետը պատրաստվում է թոշակի անցնել: Դուք պատահաբար պարզում եք, որ նա 250,000 դրամ է «պարտքով վերցրել» նախարարության ընդհանուր օգտագործման համար նախատեսված դրամական ֆոնդից: Բացահայտման արդյունքում ֆինանսական վարչության պետն անմիջապես վերադարձնում է գումարը: Սակայն, նախարարության գործունեության կարգավորումների համաձայն, նման ֆինանսական քայլերի համար նախատեսում է աշխատակցին աշխատանքից հեռացման պատասխանատվության միջոց: Տվյալ դեպքում պաշտոնյային չեն հեռացնում աշխատանքից, քանզի պարզ է դառնում, որ նրան շտապ գումար էր անհրաժեշտ իր մահացած կնոջ հուղարկավորության ծախսերը հոգալու համար:

Հարցեր

- **Արդյոք համաձա՞յն եք պաշտոնյային գործից չհեռացնելու որոշման հետ:**
- **Օրենսդրական ո՞ր կարգավորմանն է հակասում նման վարքագիծը:**
- **Ինչ քայլեր պետք է ձեռնարկի պաշտոնյան, որպեսզի նման իրավիճակները չկրկնվեն:**

Դեպքի նկարագրություն 3.

Նախարարության ընդհանուր բաժնի աշխատակիցը, որն ունի երկարամյա աշխատանքի փորձ և մեծ վաստակ տվյալ կազմակերպությունում, պարբերաբար օգտագործում է բաժնի համակարգչային տեխնիկան և պատճենահանման սարքը իր երկու ուսանող զավակների ուսումնական նյութերի պատճենահանման, տեքստերի խմբագրման, կուրսային աշխատանքների և այլ հանձնարարությունների կատարման համար: Բաժնի մյուս աշխատակիցն ունի դպրոցահասակ երկու զավակ և աշխատանքային ժամերին երկար ժամանակով զբաղեցնում է բաժնի քաղաքային հեռախոսը՝ երեխաների տնային հանձնարարությունների կատարմանը օգնելու նպատակով:

Նախարարությունը ներդրել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և հեռախոսային զանգերի ֆիքսման ու սահմանափակումների կիրառման նոր համակարգեր, ինչի արդյունքում գործերի կառավարիչը բաժնի պետից ակնկալում է թղթի և հեռախոսային ծախսերի տնտեսում:

Հարցեր

- **Որքանո՞վ է ընդունելի ընդհանուր բաժնի աշխատակիցների վարքագիծը հանրային ծառայողին ներկայացվող սահմանափակումների տեսանկյունից:**
- **Օրենսդրական ո՞ր սահմանափակումների խախտումներ կարող է գտնել բաժնի պետը գործերի կառավարչի հանձնարարականը կատարելու համար,**
- **Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկի բաժնի պետը գործերի կառավարչի հանձնարարականը կատարելու համար:**

Դեպքի նկարագրություն 4.

Հասարակական կազմակերպությունը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պատվերով ու հանձնաժողովի հետ համատեղ, երիտասարդության շրջանում իրականացնում է հակակոռուպցիոն քարոզարշավի ծրագիր: Ծրագրի շրջանակում նախատեսված են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ երիտասարդների գիտելիքների ընդլայնում կոռուպցիոն ռիսկերի և դրանց վերացմանը միտված միջոցառումներում հայտարարագրման գործիքի կիրառման արդյունավետության մասին: Հասարակական կազմակերպության ծրագրի պատասխանատուն այդ միջոցառման շրջանակում նախատեսում է համալսարաններից մեկում ուսանողների համար կազմակերպել դասախոսություն-ելույթ և տպագրել փոքրիկ բացատրական հոդված՝ հայտարարագրմանը վերաբերելի ծառայողական տվյալների հիման վրա: Նա դիմում է ԿԿՀ-ին և խնդրում միջոցառմանը մասնակցելու համար ներկայացնել Հանձնաժողովի այնպիսի աշխատակցի թեկնածություն, որը տիրապետում է հայտարարագրման համակարգին և հասանելիություն ունի ծառայողական տվյալների շտեմարանին (տվյալների շտեմարանը ամբողջությամբ հասանելի չէ լայն հանրությանը): ԿԿՀ-ը տալիս է ներկայացուցչի թեկնածությունը, որը հանդիսանում է հանրային ծառայող:

Միջոցառման ավարտից հետո հասարակական կազմակերպության ծրագրի պատասխանատուն ԿԿՀ-ի հանրային ծառայողին առաջարկում է ստորագրել վարձատրության (հոնորարի) ստացման պայմանագիր՝ ելույթի, հրապարակված բացատրական հոդվածի և ներկայացրած ծառայողական վիճակագրական տվյալների համար:

Հարցեր

- **Արդյոք ԿԿՀ-ի ներկայացուցիչ հանրային ծառայողը պետք է ընդունի՞ վարձատրության պայմանագրի առաջարկը:**

● «Այո» կամ «ոչ» պատասխանների դեպքում բերել օրենսդրական կարգավորման հիմնավորումներ:

● Ինչ քայլեր պետք է ձեռնարկի ԿԿՀ-ի ներկայացուցիչ հանրային ծառայողը:

Դեպքի նկարագրություն 5.

Աննան աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում աշխատում է ավելի քան տասը տարի, անցել է քաղաքացիական ծառայողի բոլոր աստիճաններով և ստացել վարչության պետի պաշտոնը: Պառլամենտական ընտրությունների արդյունքում հաղթող քաղաքական ուժը ձևավորում է նոր կառավարություն, որի կազմում գտնվող Աննայի ամուսինը զբաղեցնում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի պաշտոնը:

Նախարարության աշխատակիցները շնորհավորում են Աննային և ակնկալում, որ ամուսինը կօժանդակի, որ իրենք էլ քաղաքացիական ծառայության համակարգում առաջխաղացում ունենան:

Նախարարը նախարարության աշխատակազմի հետ առաջին հանդիպման ժամանակ հայտարարում է, որ ինքը վարչության պետ Աննայի ամուսինն է, և որ այդ հանգամանքը չի կարող ազդել իր գործունեության և որոշումների կայացման վրա:

Հանդիպումից հետո մամուլը հրապարակում է ստացված տեղեկատվությունը և նշում, որ նախարարը խախտում է հանրային պաշտոն զբաղեցրած անձի կողմից մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված անձանց հետ համատեղ աշխատանքի սահմանափակումը: Նախարարը հանձնարարում է նախարարության բարեվարքության հարցերով կազմակերպչին մանրամասն զեկուցել ստեղծված իրավիճակի մասին:

Դուք նախարարության բարեվարքության հարցերով կազմակերպիչն եք և պետք է պատրաստեք զեկուցագիր:

Հարցեր

● Նախարարին ներկայացվող զեկուցագրում օրենսդրական ո՞ր կարգավորումները պետք է հիշատակեք:

● Նախարարի ուշադրությունը հանրային պաշտոնատար անձի այլ սահմանափակումների խախտման ո՞ր հանգամանքի վրա պետք է հրավիրեք:

● Ինչ քայլեր կառաջարկեք իրականացնել նախարարին կամ նրա ամուսնուն՝ խուսափելու համար սահմանափակման խախտման արգելքից կամ հանրային կարծիքի կասկածներից:

Դեպքի նկարագրություն 6.

Անուշավանը երիտասարդ մաքսային ծառայող է և ոգևորված է իր աշխատանքով: Նա վերջին մեկ տարվա ընթացքում մասնագիտացել է պարենամթերք մատակարարող ընկերությունների մաքսազերծման գործում: Յուրաքանչյուր մաքսային գործարքի իրականացումից հետո հպարտանում է, որ կարող է գործարարներին իր հայեցողությամբ, այսպես կոչված, «լավություններ» անել: Անուշավանի ավագ ընկերները հորդորում են նրան մտածել նաև վատ օրերի մասին՝ երբ հնարավոր է, որ աշխատանքից զրկվի կամ ստիպված լինի այլ աշխատանքի անցնել:

Անուշավանի գործնական հատկությունների, «գործին լավ տիրապետելու» հմտությունների մասին պարենամթերք մատակարարող խոշոր կազմակերպության ներ-

կայացուցիչը զեկուցում է իր կազմակերպության մենեջերին, որն էլ առաջարկում է Անուշավանին «աչքի տակ ունենալ»: Ամեն անգամ Անուշավանի կողմից գործարքների մաքսային ձևակերպումների ավարտին մատակարարը փորձում է նրան թողնել փոքրիկ հուշանվեր կամ գումար ընդմիջման համար, որից Անուշավանը սկզբունքորեն հրաժարվում է: Մի օր էլ մատակարարը Անուշավանին ճաշի է հրավիրում, որի ժամանակ առաջարկում է համագործակցել իրենց կազմակերպության հետ՝ ակնկալելով, որ ապագայում կկարողանա իր հմտություններն ու գիտելիքներն ի սպաս դնել կազմակերպության բարգավաճմանը: Անուշավանը համաձայնում է և ամեն անգամ կազմակերպությանը տրամադրում է ծառայողական տեղեկատվություն այլ մատակարարների վերաբերյալ կամ «աչք է փակում» մաքսային հայտարարագրից փոքրիկ կամ ոչ էական շեղումների վրա, պայմանավորվում է մաքսազերծման աշխատանքներն իրականացնել միայն իր հերթափոխի ժամանակ, իրականացնում այլ մասնագիտական խորհրդատվություն: Այս գործընթացը տևում է մի քանի տարի:

Մաքսային ծառայությունում հերթական ատեստավորման ժամանակ Անուշավանը չի հաղթահարում սահմանված պահանջները, և ծառայությունում նրան ավելի ցածր պաշտոն են առաջարկում: Անուշավանը չի համաձայնում առաջարկությանը, հայտարարում է, որ տեղափոխվում է պարենամթերքի մատակարար խոշոր կազմակերպություն՝ նշելով կազմակերպության անվանումը, որտեղ պայմանները և վարձատրությունը ավելի լավն են, քան պետական հատվածում: Անուշավանի անմիջական ղեկավարը զեկուցագիր է ներկայացնում հերթափոխի պետին և ղեկավարությանը:

Հարցեր

- **Արդյոք Անուշավանի վարքագիծը համահունչ է հանրային ծառայողին ներկայացվող պահանջներին:**
- **Ինչ սահմանափակման խախտում է թույլ տվյալ Անուշավանը, նկարագրել օրենսդրական կարգավորումներով:**
- **Ինչ որոշում պետք է կայացնի և ինչ քայլեր ձեռնարկի մաքսային ծառայության ղեկավարությունը:**

Նվերներ ընդունելու արգելք

Դեպքի նկարագրություն 1.

Ալեքսը նախարարությունում համեմատաբար բարձր պաշտոն է զբաղեցնում: Նա պատասխանատու է տարածքային քաղաքականության և քաղաքաշինական կանոնների, ենթակառուցվածքների պաշտպանության գոտիների մշակման համար և այլն: Մի երեկո Ալեքսն ընկերների հետ ընթրում է ռեստորանում: Նա գիտի, որ ռեստորանը պատկանում է հաջողակ մի գործարարի, որը վերջերս խոսել էր քաղաքում հյուրանոցային համալիր հիմնելու ցանկության մասին: 12 տարի առաջ Ալեքսն այդ գործարարի հետ սովորել էր նույն կուրսում: Սակայն անցած տարիների ընթացքում նրանք կապ չէին ունեցել:

Ալեքսի՝ ռեստորանում սեղանի շուրջ տեղավորվելուց որոշ ժամանակ անց ռեստորանի սեփականատերը ներս է մտնում և նկատելով Ալեքսին՝ բարևում է ու իր ուրախությունը հայտնում՝ վաղեմի ընկերոջը հանդիպելու համար: Մոտ 10 րոպե նրանք խոսում են ընդհանուր կյանքից, ընտանիքից և աշխատանքից: Հետո ռեստորանի տերը ներողություն է խնդրում և անցնում աշխատակազմի համար նախատեսված հատված:

Մինչ հեռանալը նա կրկին մոտենում է Ալեքսի սեղանին, հրաժեշտ տալիս և հաճելի երեկո մաղթում:

Ալեքսը ռեստորանում բավական երկար է մնում, և երբ խնդրում է հաշիվը, մատուցողն ասում է, որ նրա և ընկերների հաշիվը վճարված է ռեստորանի կողմից: Ալեքսն առարկում է, բայց մատուցողն ասում է, որ պարզապես պետք է հաշտվել այն բանի հետ, որ ինքը ոչ մի կերպ չի կարող գանձել գումարը: Ալեքսը գիտակցում է, որ սա բավական շռայլ նվեր է: Նա գիտի, որ սեփականատերը երբեք չի եղել իր որևէ պաշտոնական գործողության ուղղակի հասցեատեր: Սակայն այն, ինչ Ալեքսն անում է իր աշխատանքի շրջանակներում, կարող է ունենալ որոշակի (գուցե նույնիսկ զգալի) ազդեցություն գործարարի պոտենցիալ ծրագրերի վրա:

Հարցեր

- **Պատկերացրեք, որ այս իրավիճակը տեղի է ունեցել Հայաստանում: Մասնավորապես ի՞նչ օրենքներ (օրինակ՝ «Հանրային ծառայության մասին օրենքը») և կարգավորումներ պետք է կիրառել այս գործի առնչությամբ:**
- **Առաջարկե՛ք մի քանի հնարավոր գործողություն, որոնք հանրային ծառայողը կարող է ձեռնարկել:**
- **Ո՞րը կլինի լավագույն այլընտրանքը (ի լրումն օրենքների՝ հաշվի առեք ցանկացած կիրառելի կանոնագիրք, բարոյական նորմ, նպատակահարմարության վերաբերյալ ներքին զգացումը, Ալեքսի աշխատանքային նպատակները և իր հետ աշխատողների ու հանրության բոլոր հնարավոր արձագանքները):**
- **Ի՞նչ հնարավոր հետևանքներ կարող է առաջացնել այս իրավիճակը Ալեքսի համար:**

Դեպքի նկարագրություն 2.

Նախարարության վարչություններից մեկի բարձրաստիճան պաշտոնյան հենց նոր ավարտել է մի կարևոր գործնական հանդիպում նախարարությունում չաշխատող իր գործընկերներից մեկի հետ: Գործընկերոջ հեռանալուց հետո պաշտոնյան նկատում է, որ այցելուն իր սեղանին է թողել մի շատ թանկարժեք կրակայրիչ: Պաշտոնյան զանգահարում է գործընկերոջը և տեղեկացնում կրակայրիչի մասին, իսկ վերջինս պաշտոնյային առաջարկում է իրեն պահել կրակայրիչը, քանի որ ինքը դրա կարիքը չունի:

Հարցերի պատասխանները շարադրել և ներկայացնել լսարանին:

Հարցեր

- **Արդյոք պե՞տք է պաշտոնյան պահի թանկարժեք կրակայրիչը, այո՞, թե՞ ոչ:**
- **Օրենսդրական ի՞նչ նորմերով է բնութագրվում տվյալ իրավիճակը:**
- **Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկի պաշտոնյան տվյալ իրավիճակում:**

Թեմա 4. Գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում

Վարժություն 11.

- Ծանոթացում գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի ռեեստրին, ռեեստրի հետ աշխատանք, հայտարարատուների ընտրանք, ռիսկային հայտարարագրերի դուրսբերում, ծանոթացում էլեկտրոնային հայտարարագրման սկզբունքներին: ԿԿՀ-ի հրապարակված հայտարարագրերի ռեեստրից հրապարակ-

ման ենթակա տվյալների հիման վրա հնարավոր անհամապատասխանությունների բացահայտման վարժություն:

● Հրապարակված ընտրանքային հայտարարագրերի օրինակով հայտարարագրերի վերլուծության մեթոդների կիրառում, նախօրոք ընտրված, պրոբլեմային հայտարարագրերից հնարավոր անհամապատասխանությունների բացահայտում, օրինակներ: Չհրապարակվող տվյալների որոնում Հայաստանի պետական մարմինների այլ բաց ռեգիստրներից: Ընտրողների ռեգիստր, սոցիալական ցանցեր, արտերկրի բաց ռեգիստրներ:

Այս վարժությունները կարելի է ձևակերպել նաև որպես խմբային «դեպքերի ուսումնասիրություն» և յուրաքանչյուր խմբի կողմից անհամապատասխանության բացահայտման վերաբերյալ զեկույցի ներկայացում (PPT):

Թեմա 5. Բարեվարքության համակարգի կառավարումը: Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովները: Բարեվարքության հարցերով կազմակերպիչը

Վարժություն 12.

Լսարանը բաժանել 3 խմբի:

Յուրաքանչյուր խմբին տրամադրել հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուցիոնալ կառույցների անվանումները.

Խումբ 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով,

Խումբ 2. Քաղաքացիական ծառայության էթիկայի հանձնաժողով,

Խումբ 3. Բարեվարքության հարցերով կազմակերպիչ:

Յուրաքանչյուր խումբ՝

● էլեկտրոնային կայքերից փնտրում և գտնում է համապատասխան օրենսդրական ակտերը, ուսումնասիրում այդ կառույցների նպատակները, խնդիրները, գործառույթներն ու լիազորությունները՝ էթիկայի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի պահանջների պահպանման գործում,

● դասակարգում է էթիկայի հանձնաժողովների, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, բարեվարքության հարցերով պատասխանատուների հիմնական գործառույթները էթիկայի կանոնների, այլ սահմանափակումների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման արգելքի ոլորտներում և դուրս բերում դրանց մասնակցության եղանակները,

● նախապատրաստում է առաջարկություններ այդ կառույցների գործառույթների ու գործիքակազմերի բարելավման վերաբերյալ,

● նախապատրաստում է կարճ ելույթ էթիկայի հանձնաժողովների վարույթների տեսանկյունից և ներկայացնում առաջարկություններ այդ կառույցներին նոր գործառույթների վերապահման կամ միավորման կամ նորերի ստեղծման ուղղությամբ:

Վարժություն 13.

Լսարանին հանձնարարել գրելու թեստ՝ «Բարեվարքության համակարգի կառավարումը». «Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովները», «Բարեվարքության հարցերով կազմակերպիչը» թեմաների շրջանակում:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Անուն, ազգանուն, հայրանուն _____

_____

(ստորագրություն)

«_____» _____ 2022 թ.

(օրը, ամիսը, տարին)

Թեստային առաջադրանքը կատարելու համար մասնակցին տրվում է 20 րոպե ժամանակ: Թեստում յուրաքանչյուր հարց ունի չորս ենթադրյալ պատասխան, որոնցից միայն մեկն է միանշանակ ճիշտ պատասխանը: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է **5 միավոր**, իսկ սխալ պատասխանը՝ **0 միավոր**: Սխալ պատասխաններ են համարվում ոչ ճիշտ պատասխան նշելը (այդ թվում՝ ոչ ամբողջական պատասխանը), մեկից ավելի պատասխան նշելը և որևէ պատասխան չնշելը:

Հարց 1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության համակարգը ներառում է՝

1. վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքը),
2. գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը,
3. առաջխաղացման և կատարողականի գնահատման համակարգը,
4. թափուր պաշտոնի համար հայտարարված մրցութային կարգը:

Հարց 2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով սահմանվում են՝

1. պատգամավորի պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները,
2. քննիչի պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները,
3. դատախազի պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները,
4. համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները:

Հարց 3. Հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովները՝

1. վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցներ են կիրառում հանրային ծառայողների նկատմամբ,

2. քրեական օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ իրականացնում են հետաքննություն,

3. քննում և լուծում են հանրային ծառայողների իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները,

4. կիրառում են կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Հարց 4. Հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները քաղաքացիները պետք է հանձնեն՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին,

2. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության և կոռուպցիոն հանցագործությունների վարչություն,

3. ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին,

հանրային ծառայողի համապատասխան ծառայության էթիկայի հանձնաժողովին:

Հարց 5. Ազգային ժողովի պատգամավորի վարքագծի կանոնների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները քննում և լուծում է՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը,

2. ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը,

3. ԱԺ խորհուրդը,

4. Պատգամավորական էթիկայի ժամանակավոր հանձնաժողովը:

Հարց 6. Ազգային ժողովի պատգամավորի անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պահանջների խախտման դեպքերը քննում և լուծում է՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը,

2. ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը,

3. ԱԺ խորհուրդը,

4. Պատգամավորական էթիկայի ժամանակավոր հանձնաժողովը:

Հարց 7. Հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պահանջների խախտման դեպքերը քննում և լուծում է՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը,

2. ՀՀ վարչապետին կից հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը,

3. ԱԺ խորհուրդը,

4. համապատասխան հանրային ծառայության էթիկայի հանձնաժողովը:

Հարց 8. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1. քննում և լուծում է հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ դեպքերը,

2. հանրային ծառայողներին տրամադրում է վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն,

3. կարգապահական պատասխանատվության միջոցներ է կիրառում հանրային ծառայողների նկատմամբ,

4. պետական պաշտոն զբաղեցնող անձի խորհրդականին, օգնականին և ռեֆերենտին տրամադրում է վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն:

Հարց 9. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1. իրականացնում է համապատասխան մարմնի բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ,

2. մշակում է բարեվարքության պլանների նախագծերը,

3. մշակում է բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր,

4. վերը նշված բոլորը:

Հարց 10. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով բարեվարքության հարցերով կազմակերպչի հանրային ծառայության պաշտոն նախատեսվում է ստեղծել՝

1. յուրաքանչյուր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում,

2. յուրաքանչյուր պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում,

3. յուրաքանչյուր պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում,

4. յուրաքանչյուր առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում:

ՄՈԴՈՒԼ 4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Թեմա 1. Կոռուպցիոն իրավախախտումների առանձնահատկությունները և տեսակները

Վարժություն 1.

Սովորողներին կներկայացվեն տարբեր իրադրություններ և կհանձնարարվի՝

- որոշել՝ արդյոք նկարագրվածը հանցագործության տարրեր պարունակո՞ւմ է, թե՞ ոչ,
- որոշել՝ արդյոք այդ հանցագործությունը կոռուպցիոն բնույթի՞ է, թե՞ ոչ,
- հիմնավորել պատասխանները,
- տալ ճիշտ որակում՝ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածին հղում կատարելով,
- որոշել պատժատեսակը:

Վարժություն 2.

Սովորողներից յուրաքանչյուրին կհանձնարարվի դուրս գրել կոռուպցիոն հանցագործության հինգ տեսակ, ներկայացնել դրանց կատարման օրինակներ և հիմնավորել պատասխանները:

Սովորողները կքննարկեն և կմեկնաբանեն արդյունքները, կարծիքներ կփոխանակեն, հանդես կգան բանավոր ելույթներով:

Ելույթները կգնահատվեն՝ հաշվի առնելով՝

- համապատասխան հանցագործությունը որակելու, այն հիմնավորելու կարողությունը,
- կատարված եզրահանգումների որակը:

Վարժություն 3.

Ա.-ն կառուցապատման ոլորտի գործարար է: Մայրաքաղաքում պլանավորվում է կառուցել դեպի օդանավակայան տանող նոր ճանապարհ: Նախարարությունում այդ կապակցությամբ նոր մրցույթ է նախապատրաստվում, որի համար պատասխանատու է Բ.-ն: Հիմնավորե՛ք, թե ո՞վ և ո՞ր հանցագործությունների համար է ենթակա քրեական պատասխանատվության.

ա. Ա.-ն անվճար վերանորոգում է Բ.-ի տունը այն պայմանով, որ նա մրցույթը կազմի այնպես, որ Ա.-ի կազմակերպությունը հաղթելու առավել մեծ շանս ունենա:

բ. Ա.-ն խոստանում է անվճար վերանորոգել Բ.-ի տունը այն պայմանով, որ նա մրցույթը կկազմի հօգուտ Ա.-ի, իսկ Բ.-ն ընդունում է Ա.-ի խոստումը:

գ. Ա.-ն իր փաստաբանին ուղարկում է Բ.-ի մոտ՝ խոստումը փոխանցելու:

դ. Ա.-ն գումար է փոխանցում Բ.-ի մորը Բ.-ի գիտությամբ:

Վարժություն 4.

Ա.-ն կառուցապատման ոլորտի գործարար է: Մայրաքաղաքում պլանավորվում է կառուցել դեպի օդանավակայան տանող նոր ճանապարհ: Նախարարությունում այդ կապակցությամբ նոր մրցույթ է նախապատրաստվում, որի համար պատասխանատու է Բ.-ն:

Հիմնավորեք՝ ո՞վ և ո՞ր հանցագործությունների համար է ենթակա քրեական պատասխանատվության, եթե՝

Ա.-ն գումար է վճարել իր հիմնական մրցակցի ներկայացուցչին՝ վերջինների հայտի գնի մասին տեղեկություն կորզելու նպատակով: Ունենալով այդ տեղեկությունը՝ Ա-ն ավելի ցածր գնով հայտ է ներկայացրել և հաղթել մրցույթում:

Թեմա 2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման առանձնահատկությունները

Վարժություն 5.

Սովորողները, հիմնվելով դասախոսության արդյունքում ձեռք բերած գիտելիքների վրա, պետք է որոշեն, թե նախապես իրենց տրված խնդիրներում նկարագրված իրավիճակներից յուրաքանչյուրը կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակներից որին է համապատասխանում:

Այս վարժությունը կարելի է ձևակերպել նաև որպես խմբային «դեպքերի ուսումնասիրություն» և յուրաքանչյուր խմբի կողմից զեկույցի ներկայացում (PPT):

Նշված հարցերի պատասխանների հիման վրա կկատարվի գնահատում:

Վարժություն 6.

Աֆրիկյան նահանգներից մեկում տեղի քահանան մեղավոր էր ճանաչվել հանցագործության կատարման մեջ: Նա դատավորին խոստացել էր աղոթել նրա համար, եթե վերջինը առավել մեղմ պատիժ նշանակի: Արդյոք աղոթելու առաջարկը կարելի՞ է դիտարկել որպես «առավելություն» և ըստ այդմ որակել հանցագործությունը:

Հիմնավորեք ձեր պատասխանը:

Վարժություն 7.

Գ.-ն՝ Ա.-ի իրավաբանը, նույն կուսակցության անդամ է, ինչպես Բ.-ն: Գ.-ն Բ.-ից ավելի ազդեցիկ քաղաքական գործիչ է և մեծ ազդեցություն ունի Բ.-ի վրա: Ա.-ն վճարել էր Գ.-ին, որպեսզի համոզի Բ.-ին այնպիսի մրցույթ նախապատրաստել, որ Ա.-ն հաղթի:

Որակեք երեքի գործողությունները և հիմնավորեք ձեր պատասխանը:

Վարժություն 8.

Բ.-ն ստացել էր Ա.-ի գումարը: Բայց Բ.-ն միայն պատրանք է ստեղծում, թե զբաղվում է մրցույթներով: Իրականում նա պատասխանատու չէ մրցույթի նախապատրաստման և անցկացման համար և որևէ ազդեցություն չի կարող ունենալ մրցույթի արդյունքների վրա:

Որակեք Բ.-ի արարքը և հիմնավորեք ձեր պատասխանը:

Վարժություն 9.

Նախարարության աշխատակից Գ.-ն նստում է տաքսի, որի վարորդ Կ.-ն համալսարանի շրջանավարտ է և տվյալ նախարարություն աշխատանքի ընդունվելու հայտ էր ներկայացրել: Գ.-ն ձևացնում է, թե կարող է օգնել Կ.-ին և ներքին կարգով Կ.-ի հայտը առաջ քաշել: Դրա համար Գ.-ն Կ.-ից ստանում է 100.000 դրամ: Իրականում Գ.-ն նախարարության կադրային քաղաքականություն իրականացնելու որևէ լիազորություն չուներ:

Որակեք տվյալ իրավիճակը և հիմնավորեք ձեր պատասխանը:

Վարժություն 10.

Բ.-ն խորհրդատվական ընկերության իրական սեփականատեր է: Նրա ընկերությունը նախարարություն է ուղարկում վճարման ենթակա հաշիվներ՝ խորհրդատվական ծառայություններ մատուցելու դիմաց: Իրականում նման ծառայություններ երբեք չեն մատուցվել: Բ.-ն հանձնարարում է նախարարության հաշվեհամարից վճարել ընկերության կողմից մատուցված ծառայությունների համար:

Որակեք տվյալ իրավիճակը և հիմնավորեք ձեր պատասխանը:

Վարժություն 11.

Ճանապարհաշինության ավարտից հետո անցկացված աուդիտի արդյունքում պարզվել է, որ գնումների ընթացակարգը չի համապատասխանել օրենքին, իսկ մայրուղու կառուցման ընթացքում պետական միջոցներից անհետացել է 2 միլիոն եվրո:

Շինարարության մեկնարկից հետո Բ.-ն ձեռք է բերել «Mercedes» և «Porsche» մակնիշի ավտոմեքենաներ: Մամուլում Բ.-ին պատկանող շքեղ ավտոմեքենաների մասին հրապարակումներից հետո իրականացվեց հետաքննություն: Պարզեց, որ Բ.-ն 250 հազար եվրո կանխիկ գումար է փոխանցել օտարերկրյա հաշվեհամարին: Նրա ամսական եկամուտը 400 եվրո է: Նրա կինն աշխատում է փոքր փաստաբանական ընկերությունում և նույնպես մեծ եկամուտ չունի:

Որակեք տվյալ իրավիճակը և հիմնավորեք ձեր պատասխանը:

Թեմա 3. Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների առավել ծանր դրսևորումների որակման և քննության առանձնահատկությունները

Վարժություն 12.

Որպես տնային աշխատանք՝ սովորողներին հանձնարարել՝

- ուսումնասիրել խնդրի ֆաբուլան և համապատասխան որակում տալ խնդրի ֆաբուլայում ներկայացված հանցագործությանը,
- հանցագործությունը որակելուց հետո մշակել հանցագործության քննության ծրագիր,
- նկարագրել քննության հիմնական քայլերը և ձեռնարկվող միջոցները:

Քննության մեթոդիկան պետք է պարունակի հետևյալ հարցերը և դրանց պատասխանները.

- Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը կատարվել է կաշառք տվողի

կամ նրա ներկայացրած անձի օգտին իր լիազորությունների շրջանակի մեջ մտնող, թե՞ ակնհայտ ապօրինի գործողության կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

● Պաշտոնատար անձի բանկային հաշիվներում որոշակի ժամանակահատվածի կտրվածքով արտացոլված դրամական միջոցների շարժը համապատասխանու՞մ է նրա օրինական աշխատավարձի շարժին:

● Տվյալ պաշտոնատար անձը դասվու՞մ է եկամուտների վերաբերյալ պարտադիր հայտարարագիր ներկայացնող սուբյեկտների շարքին:

● Որտե՞ղ, ե՞րբ, ու՞մ միջոցով և ի՞նչ եղանակով է փոխանցվել կաշառքի առարկան:

● Կաշառք ստանալու ժամանակ կաշառք տվողից բացի այլ անձինք ներկա եղե՞լ են:

● Պաշտոնատար անձը հանցանքը կատարել է անձա՞մբ, թե՞ միջնորդի միջոցով:

● Առկա չե՞ն արդյոք կաշառքի շորթման հատկանիշներ:

● Եթե առկա են շորթման հատկանիշներ, ապա անձի կոնկրետ ո՞ր իրավունքների կամ օրինական շահերի ոտնահարման սպառնալիքով է այն կատարվել և այլն:

Սովորողները աշխատանքը ներկայացնում են PPT ձևաչափով և համապատասխան հիմնավորումներով:

Վարժություն 13.

2019 թ. հոկտեմբերի 23-ին, «Otika» կազմակերպության աշխատակից Ց.-ն դիմել էր քննչական կոմիտե և հայտարարել, որ անվճար սոցիալական բնակարան ստանալու իրավունք ունի: Հոկտեմբերին նա պետք է ստանար իր բնակարանի փաստաթղթերը: Սակայն բնակարանային դեպարտամենտի աշխատող Գ.-ն նրան հայտնել էր, որ քաղաքապետարանի որոշմամբ, 1988 թվականից հետո հերթ կանգնած անձինք, այդ թվում՝ Ց.-ն, չեն կարող այս տարի բնակարան ստանալ: Միևնույն ժամանակ, Գ.-ն խոստացել էր 2000 ԱՄՆ դոլարով լուծել այդ խնդիրը:

1. Որո՞նք են կաշառակերության կառուցվածքի տարրերը:

2. Նշե՛ք այս տեսակի քրեական գործերով պարզաբանման և ապացուցման ենթակա հանգամանքները:

3. Կայացրե՛ք տակտիկական որոշում:

Վարժություն 14.

Քրեական գործ հարուցելուց հետո քննիչը ձերբակալեց Գ.-ին՝ Ց.-ից կաշառք ստանալու պահին: Ձերբակալության ընթացքում Գ.-ից առգրավվեց 2000 ԱՄՆ դոլար կաշառքը:

1. Որոշեք Գ.-ին հարցաքննելու կարգը և կազմեք այդ քննչական գործողության պլանը:

2. Կազմեք քրեական գործի հետագա քննության պլանը:

Վարժություն 15.

Փաստաբանի մասնակցությամբ հարցաքննված կասկածյալ Գ.-ն բացատրեց, որ նա ավելի քան 10 տարի աշխատում է բնակարանային դեպարտամենտում: Իսկ Ց.-ի հետ ծանոթ է վաղուց, երբ այնտեղ դեռ չէր աշխատում: Սեպտեմբերին Ց.-ն անձնական կարիքների համար նրանից վերցրել էր 2000 ԱՄՆ դոլար՝ ստացականով: Կաս-

կածյալը այս փաստաթուղթը ներկայացրեց քննիչին: Ց.-ն ամբողջությամբ հերքեց այդ փաստը և պնդեց իր ցուցմունքները:

1. Գնահատեք առկա քննչական իրավիճակը և կազմեք քրեական գործի հետագա քննության պլանը:
2. Կազմեք Ց.-ի և Գ.-ի առերեսման պլանը:
3. Որոշում կայացրեք անհրաժեշտ փորձաքննություն նշանակելու հարցում:

Վարժություն 16.

Քրեական գործի քննության ընթացքում պարզվել է, որ քաղաքապետարանը որևէ որոշում չի կայացրել 1988 թվականից հետո հերթագրված անձանց բնակարան հատկացնելու մերժման մասին: Պարզվել է նաև, որ ստացականը ստորագրել է ոչ թե Ց.-ն, այլ Գ.-ի կինը:

1. Գնահատե՛ք գործով հավաքված ապացույցները և ընդունեք տակտիկական որոշում:
2. Կազմե՛ք Գ.-ի կրկնակի հարցաքննման պլան:
3. Որո՞նք են հետագա քննչական քայլերը այս քրեական գործի քննության ընթացքում:

Թեմա 4. Ակտիվների վերադարձ. ապօրինի գույքի բռնագրավում, ռազմավարություն և գործիքներ, իրավական և ընթացակարգային ասպեկտները

Վարժություն 17.

Մասնակիցները լսարանում կքննարկեն դասախոսության ընթացքում ներկայացված թեմաները: Կհանձնարարվի թեստային աշխատանք:

Թեմա 5. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մարմիններ

Վարժություն 18.

Թեմայի վերաբերյալ ակնարկի (Essay) շարադրանք:

Որպես տնային աշխատանք հանձնարարել նախապատրաստել առաջարկություններ դասախոսության ընթացքում ներկայացված խնդիրների վերաբերյալ, հիմնավորել այդ առաջարկությունները և նշել դրանց առավելությունները կոռուպցիայի դեմ պայքարում: Առաջարկությունները կարող են պատրաստվել սովորողների կողմից անհատապես, որոնք գործնական դասի ժամանակ կներկայացվեն և կքննարկվեն: Արդյունքները կգնահատվեն և կգրանցվեն որպես միջանկյալ արդյունք:

Ակնարկում մեկնաբանությունները պետք է ներառեն առաջարկություններ դասախոսության ընթացքում ներկայացված խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև նրանց հիմնավորումները: Ակնարկի գնահատումը ուղղակիորեն կախված չէ կատարված աշխատանքի էջերի քանակից: Մեկնաբանությունները պետք է շարադրված լինեն որպես թեզեր: Աշխատանքի ծավալը սովորաբար պետք է լինի առնվազն 2 և ոչ ավելի, քան 4 էջ (տիտղոսաթերթ չի պահանջվում, թղթի ձևաչափը՝ A-4, տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5): Միևնույն ժամանակ,

ակնարկի գնահատականը կարող է իջեցվել սովորողի սեփական կարծիքը հակիրճ, սեղմ արտահայտելու անկարողության համար: Տեքստում նկարազարդումներ (դիագրամներ, գծապատկերներ, աղյուսակներ, նկարներ և այլն) կարող են ներառվել խելամտության սահմաններում:

Ակնարկի թեմաներ

● Հայաստանի Հանրապետությունում գործող կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարող հիմնական իրավապահ մարմինները

● Հակակոռուպցիոն իրավապահ մարմինների դերը կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարում

● Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետությունում

● Մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազների ինստիտուտի ներդրման նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետությունում

● Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծման նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետությունում

● Կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցությունը, հիմնական ուղղությունները և լիազորությունները

Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված միջազգային մարմինները, ներպետական մարմինների հետ համագործակցությունը

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Անուն, ազգանուն, հայրանուն _____

_____

(ստորագրություն)

«_____» _____ 2022 թ.
(օրը, ամիսը, տարին)

Հարց 1. **Նշեք ակտիվների վերականգնման հիմնական եղանակները**.

1. անձի քրեական դատապարտման արդյունքում (conviction-based asset recovery),
2. առանց մեղադրական դատավճռի (non-conviction-based asset recovery),
3. վարչական բռնագրավման միջոցով (administrative confiscation),
4. ակտիվների վերականգնում քաղաքացիաիրավական կարգով (civil justice)
5. բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 2. **Ակտիվների վերականգնման ամեատարածված ձևը**.

1. ակտիվների վերականգնումը անձի քրեական դատապարտման արդյունքում,
2. ակտիվների վերականգնումը առանց մեղադրական դատավճռի,
3. ակտիվների վերականգնումը վարչական բռնագրավման միջոցով,
4. ակտիվների վերականգնումը քաղաքացիաիրավական կարգով:

Հարց 3. **Առանց մեղադրական դատավճռի ակտիվների վերականգնումը որոշ երկրներում ընդունված է կոչել՝**

1. քաղաքացիական բռնագրավում,
2. քաղաքական բռնագրավում,
3. քրեական բռնագրավում,
4. միջազգային բռնագրավում:

Հարց 4. **Պետության կողմից առանց դատարան դիմելու՝ գործադիրի կամ խորհրդարանի կողմից ընդունված ակտի հիման վրա ակտիվները սառեցնելը կամ դատարանում վարչական վարույթ սկսելը, որին հետևում է գույքի բռնագրավումը, կոչվում է՝**

1. ակտիվների վերականգնում առանց մեղադրական դատավճռի,
2. ակտիվների վերականգնում քաղաքացիաիրավական կարգով,
3. ակտիվների վերականգնում անձի քրեական դատապարտման արդյունքում,
4. ակտիվների վերականգնում վարչական բռնագրավման միջոցով:

Հարց 5. **Ընդունված է համարել, որ ակտիվների վերադարձը բաղկացած է «.....» փուլից.**

1. 6+1
2. 4+1
3. 3+1
4. 5+1

Հարց 6. Դասավորեք ակտիվների վերադարձի փուլերը ըստ հերթականության.

1. որոշումների կատարում,
2. վերականգնված կամ արգելանքի/կալանքի տակ դրված գույքի կառավարում,
3. դատական գործընթաց,
4. ակտիվների վերադարձ,
5. ակտիվների որոնում և հետախուզական տվյալների ու ապացույցների հավաքագրում,
6. ապահովագրում ակտիվների օտարման կամ վերացման վտանգից:

Հարց 7. **«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է՝**

1. 2020 թվականի հունվարի 13-ին,
2. 2020 թվականի ապրիլի 16-ին,
3. 2019 թվականի մայիսի 08-ին,
4. 2019 թվականի դեկտեմբերի 09-ին:

Հարց 8. **«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով սահմանվում են՝**

1. ուսումնասիրություն սկսելու հիմքերը,
2. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ հարուցելու և ուսումնասիրություն կատարելու իրավասու մարմինների շրջանակը,

3. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առնչությամբ միջազգային համագործակցության կանոնները,

4. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված այլ հարաբերություններ,

5. բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 9. **Եթե «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքներով, ապա գործում են՝**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոնները,

2. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոնները,

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոնները,

4. Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով սահմանված կանոնները:

Հարց 10. **Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն սկսվում է՝**

1. հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ,

2. գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցմամբ,

3. ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի կայացմամբ:

ՄՈԴՈՒԼ 5. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թեմա 1. Քաղաքական կոռուպցիա

Դասախոսության ընթացքում ներկայացված նյութի քննարկում:

Քաղաքական կոռուպցիայի՝ ԽՍՀՄ-ում և ՀՀ-ում խորհրդային և հետխորհրդային շրջանում բացահայտված և հասարակական մեծ արձագանք առաջացրած դեպքերի քննարկում:

Քաղաքական կոռուպցիան հաճախ դրսևորվում է քաղաքական պաշտոններ զբաղեցնողների, հանրային ծառայողների, ինչպես նաև դատական համակարգում, դատախազությունում, ուժային կառույցներում և պետական գնումների բնագավառում աշխատողների գործունեության ժամանակ: Քննարկել թվարկված պաշտոնատար անձանց/աշխատողների հնարավոր կոռուպցիոն դրսևորումները և դրանց արդյունավետ հակազդման ու կանխարգելման հնարավորություններն ու ձևերը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների շահերի բախում: Անհամատեղելիության պահանջներ, նվերների ընդունման արգելք և այլ սահմանափակումներ:

Թեմա 2. Կուսակցությունների ֆինանսավորում

Դասախոսության ընթացքում ներկայացված նյութի քննարկում:

Կուսակցությունների ֆինանսավորման հիմնախնդիրները: Ֆինանսավորման աղբյուրները՝ պետության կողմից, ներքին և արտաքին դոնորներից: Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման սահմանափակումների և կարգավորման անհրաժեշտությունը կոռուպցիոն դրսևորումները առավելագույնս կանխելու համար: Հիմնադրամի հանգանակության (***ֆանդռեյզինգ***) նշանակությունը և ազդեցությունն ընտրական գործընթացների վրա:

Վարժություն 1.

Սովորողները բաժանվում են 4-5 հոգուց կազմված խմբերի և կատարում խմբային աշխատանք.

- Յուրաքանչյուր խումբ պետք է ուսումնասիրի և վեր հանի Հայաստանում քաղաքական կոռուպցիայի ժամանակակից դրսևորումներից մեկը, նկարագրի այն և ներկայացնի լսարանին:
- Այնուհետև, ունկնդիրների հետ համատեղ քննարկումներից հետո, յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի այդ դրսևորման դեմ պայքարելու արդյունավետ մեխանիզմ:

Թեմա 3. Քաղաքական կոռուպցիան և ընտրությունները

Դասախոսության ընթացքում ներկայացված նյութի քննարկում:

Ընտրական կոռուպցիայի տեսակները և ժամանակակից ընտրական գործընթացը հաճախ ուղեկցող բացասական երևույթներն են՝

- ընտրական հանձնաժողովների, իրավապահ մարմինների և լրատվամիջոցների կողմնակալությունը,
- վարչական ռեսուրսի օգտագործումը,
- նախընտրական քարոզարշավների ապօրինի ֆինանսավորումը, ընտրակաշառքը,
- ընտրական փաստաթղթերի և քվեարկության արդյունքների կեղծումը,
- «կեղտոտ» ընտրական տեխնոլոգիաների և «սև PR»-ի կիրառումը:

Քննարկել դրանց ազդեցությունն ընտրության արդյունքների վրա և դրանց հետևանքները:

Ընտրական կոռուպցիայի և ընտրախախտումների կանխարգելման գործում դիտորդական առաքելությունների, ՀԼՄ-ների և վստահված անձանց խաղացած դերը: Ազատ և արդար ընտրությունների անցկացումը՝ էլեկտորատի վստահությունը և ընտրության արդյունքների հանդեպ հավատն ապահովելու նախապայման:

Գտնել ներկայացված խնդիրների լավագույն լուծումները *ուղեղային գրոհի* միջոցով:

Թեմա 4. Քաղաքական կոռուպցիան միջազգային ասպարեզում

Դասախոսության ընթացքում ներկայացված նյութի քննարկում:

Միջազգային քաղաքական կոռուպցիայի տեսակները: Ի *լրումն*՝ ադրբեջանական խավիարային դիվանագիտություն, լանդրոմատի (լվացքատան), ինչպես նաև այլ օրինակներ՝ Թուրքիայի նախագահ Էրդողանի ընտանիքի ոչ լեգալ նավթային եկամուտները և այլն:

Կոռուպցիայի հաղթահարման միջազգային փորձը: Հաջողված օրինակներ (Իտալիայի «Մաքուր ձեռքեր» օպերացիան՝ ուղղված մաֆիայի վերացմանը, և դրա խիստ դրական ազդեցությունը երկրի զարգացման վրա, Լի Կուան Յուի հակակոռուպցիոն միջոցառումները Սինգապուրում և դրանց արդյունքը՝ «տնտեսական հրաշքը» և այլն): Կարծիքներ և քննարկումներ:

Վարժություն 2. Դերային (իրավիճակային) խաղ

Սովորողները բաժանվում են խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրվում է որոշակի խնդիր, որի համար պետք է գտնեն լուծում, թեև խմբերի խնդիրների լուծումները հակասում են միմյանց: Առաջարկվում է իրականացնել ներխմբային քննարկումներ, ընտրել բանագնացներ (մեկական՝ յուրաքանչյուր խմբից), որոնք բանակցությունների միջոցով պիտի գտնեն լավագույն փոխշահավետ լուծումը: Այն չպետք է պարունակի

կոռուպցիոն ռիսկեր և չպետք է հակասի գործող օրենսդրությանը: Բանակցություններն ընթանում են խմբերի ներկայությամբ: Վերջիններս կարող են առաջարկել ընդհատել բանակցությունները և իրենց բանագնացներին կանչել խորհրդակցության, անգամ կարող են փոխել իրենց բանագնացին:

ՄՈԴՈՒԼ 6. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թեմա 1. Կոռուպցիայի սոցիալ-տնտեսական բովանդակությունը

Վարժություն 1.

Իրավիճակային խնդրի վերլուծություն և առաջարկությունների ներկայացում խմբային աշխատանքի միջոցով՝ յուրաքանչյուր խմբում 3-4 սովորողի մասնակցությամբ:

Իրավիճակային խնդրի նկարագրություն

Կառավարությունը շրջանառության մեջ է դրել մի օրինագիծ, որով նախատեսված է երկրում գրանցված բուժաշխատողների համար սահմանել հատուկ նվազագույն աշխատավարձի շեմ՝ 240 000 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը: Աշխատավարձի նշված շեմը բարձր է երկում գրանցված բուժաշխատողների միջին աշխատավարձից 40%-ով: Կառավարությունն այս քայլով նպատակ ունի, մի կողմից, բարձրացնել բուժաշխատողների բարեկեցության մակարդակը, որը տարիներ շարունակ ցածր է եղել՝ առիթ տալով բազմաթիվ գործադուլների ու դժգոհությունների, մյուս կողմից, ավելի գրավիչ դարձնել բուժախատողի մասնագիտությունը՝ նպաստելով բժշկական համալսարաններում ավելի մրցունակ դիմորդներ ներգրավելուն՝ լրացնելով երկրում առկա բժիշկների պակասը:

Երկրում առկա բուժհաստատությունների 80%-ը պատկանում է մասնավոր հատվածին, իսկ դրանց 60%-ը, ըստ երկրում առկա դասակարգման չափանիշների, խոշոր ընկերություններ են:

Կառավարության կողմից շրջանառության մեջ դրված օրինագծի ընդունումը մասնավոր ընկերություններին սպառնում է ծախսերի ավելացմամբ և, իբրև հետևանք, շահույթի նշանակալի կրճատմամբ:

Առաջադրանք

Վերլուծել ներկայացված իրավիճակը: Վերլուծության, ինչպես նաև նախորդող դասախոսությունների ընթացքում կոռուպցիայի մոդելների վերաբերյալ ներկայացված նյութերի հիման վրա մշակել հնարավոր կոռուպցիոն առաջարկի և պահանջարկի ձևավորումը, դրա մեխանիզմները և արդյունքները: Նկարագրել այն սցենարը, ըստ որի կոռուպցիոն դրսևորումների հետևանքով օրինագծի ընդունումը կասեցվում է: Վերլուծել կոռուպցիոն դրսևորման պատճառով կասեցված օրինագծի ազդեցությունը երկրի տնտեսական և սոցիալական ոլորտների վրա կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածների համար: Կոռուպցիոն գործընթացը և դրա ազդեցությունը ներկայացնել սխեմայի տեսքով:

Առաջադրանքի կատարման համար տրվում է մեկ շաբաթ ժամանակ, որից հետո գործնական դասաժամի ընթացքում խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է իր վերլուծությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով ներկայացման PPT ձևաչափից: Ներկայացնող խմբի վերլուծությունը լսելուց հետո մյուս խմբերը արտահայտում են իրենց տեսակետն ու դիտողությունները, որից հետո ներկայացնող խումբը պատասխանում է հնչած դիտողություններին՝ փորձելով պաշտպանել սեփական տեսակետը:

Առաջադրանքի նպատակը սովորողներին մասնագիտական քննարկման մեջ ներքաշելն ու կարծիքների փոխանակումն է:

Առաջադրանքի գնահատում

Առաջադրանքի գնահատականը կազմված է երկու հավասար մասերից. առաջինը խմբային գնահատականն է, երկրորդը՝ անհատական, որը կախված է սովորողի՝ ներկայացումից հետո առաջադրվող հարցերին տված պատասխաններից և մյուս խմբերի ներկայացումներից հետո քննարկումների ընթացքում ցուցաբերած ակտիվությունից:

Խմբային գնահատականը նշանակվում է՝ հաշվի առնելով՝

- իրավիճակի վերլուծության խորությունը,
- կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացահայտումը և սահմանումը,
- նկարագրված հնարավոր սցենարների մեկնաբանությունները,
- կոռուպցիոն դրսևորման ազդեցության գնահատումը սոցիալ-տնտեսական ոլորտների վրա:

Վարժություն 2.

Սովորողներին բաժանել երկու խմբի և հանձնարարել վերլուծել ներկայացված տեսությունները և մշակել հերքող քննադատություն ու հակափաստարկներ: Յուրաքանչյուր խումբ պետք է հերքի մեկ տեսություն:

Գործնական առաջադրանքի նկարագրություն

Տարբեր երկրներում կոռուպցիայի դեմ պայքարի ընդդիմախոսները հաճախ օգտագործում են կեղծ տեսություններ ու փաստարկներ, որոնց համաձայն՝ կոռուպցիան ունի ոչ միայն բացասական, այլև որոշ դեպքերում դրական ազդեցություն երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Նշված տեսություններն ու փաստարկները չունեն ոչ մի ծանրակշիռ հիմնավորում, որ կընդունվի գիտական հանրույթի կողմից: Այդուհանդերձ, լայն հանրության շրջանում հաճախ կարելի է հանդիպել նման մոտեցումների և կոռուպցիայի առկայության արդարացումների: Թվարկենք երկու մենատարածված կեղծ տեսությունները.

1. Կոռուպցիան նպաստում է երկրի եկամուտների հավասար բաշխմանը և սոցիալական հավասարությանը: Այլ կերպ ասած՝ կոռուպցիան օգնում է, որ բնակչության առավել շատ եկամուտներ ունեցող հատվածը ստիպված լինի կիսել դրանք պետական պաշտոնյաների հետ, որոնց աշխատավարձերը զարգացող շատ երկրներում չափազանց ցածր են:
2. Կոռուպցիան նպաստում է բարդ ու անարդյունավետ բյուրոկրատական գործընթացների շրջանցմանը: Եթե կոռուպցիան կրում է ոչ թե կորզող, այլ կամավոր բնույթ, այն նպաստում է տնտեսական արդյունավետության բարձրացմանը՝ թեթևացնելով պետական ու մասնավոր հատվածի միջև լարվածությունը: Այլ կերպ ասած՝ այն երկրներում, որտեղ կա ավելորդ վարչարարություն և լիազորությունների անարդյունավետ ու սխալ բաշխում, կաշառքը կարող է լինել ավելորդ խնդիրներից խուսափելու «արդյունավետ» միջոց: Այս տեսության կողմնակիցները պնդում են, որ այս դեպքում կոռուպցիան ձեռք է բերում հերթական հարկատեսակի ձև և նպաստում է տնտեսական ցիկլի արագացմանը:

Առաջադրանք

Ուսումնասիրել և վերլուծել ներկայացված տեսությունները, անհրաժեշտության դեպքում պատրաստել ակնարկ (review) դրանց վերաբերյալ, գտնել, մշակել և ներկայացնել քննադատական ու հերքող փաստարկներ: Մշակած աշխատանքը ներկայացնել բանավոր խմբային ելույթի միջոցով (ընդհանուր՝ երկու ելույթ):

Խմբերի ելույթից հետո կազմակերպվում է քննարկումների, մեկնաբանությունների ու կարծիքների փոխանակում: Առաջադրանքի համար տրվում է մեկ շաբաթ ժամանակ:

Առաջադրանքի գնահատում

Առաջադրանքի գնահատականը բաղկացած է երկու հավասար մասերից՝ խմբային և անհատական: Խմբային գնահատականը նույնն է խմբի բոլոր մասնակիցների համար, իսկ անհատական գնահատականը նշանակվում է՝ հաշվի առնելով մասնակցի՝ հարցերին տրված պատասխանների որակն ու մյուս խմբի ելույթին հաջորդող քննարկմանը ցուցաբերած ակտիվությունը:

Խմբային գնահատականը նշանակվում է՝ հաշվի առնելով, թե՝

- ինչ խորությամբ է ուսումնասիրվել այն գրականությունը, որտեղ ներկայացված են նշված տեսությունների հերքումներ,
- ինչպես են կառուցված քննադատությունը և հակափաստարկները,
- ինչ խորությամբ/մանրամասնությամբ է նկարագրված կոռուպցիայի բացասական ազդեցությունը նշված տեսությունների հերքման համատեքստում:

Թեմա 2. Կոռուպցիայի ազդեցությունը տնտեսության վրա

Վարժություն 3.

Գրականության ուսումնասիրություն և դրա հիման վրա գրավոր անհատական աշխատանքի շարադրում՝ մեկնաբանմամբ, վերլուծությամբ և սեփական դիրքորոշմամբ:

Առաջադրանք

Ուսանողներին հանձնարարվում է հետազոտել Տարոն Աճեմօղլուի և Ջեյմս Ռոբինսոնի «Ինչու են ձախողվում պետությունները» գրքում ներկայացված «տնտեսական ինստիտուտների ներառականություն» հասկացությունը, դրա հիման վրա գրավոր ներկայացնել նշված հասկացության վերաբերյալ վերլուծություն և մեկնաբանում, ինչպես նաև գնահատել ու ներկայացնել սեփական դիրքորոշումը ՀՀ-ի տնտեսական ինստիտուտների ներառականության վերաբերյալ և մշակել այդ ներառականությունը բարձրացնելու առաջարկներ:

Առաջադրանքն իրականացնելիս անհրաժեշտ է հետազոտել գրքում ներկայացված այլ երկրների փորձը, մոդելները և դրանց համադրության հնարավորությունները ՀՀ-ի համար:

Նշված առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է անդրադառնա հետևյալ հարցերին.

- «տնտեսական ինստիտուտներ» հասկացությունը և դրա կապը կոռուպցիայի մա-

կարդակի հետ, դրանց դասակարգումը՝ ըստ ներառող (inclusive) և կորզող (extractive) բնույթի,

- գրքում ներկայացված երկրների մոդելները և դրանց համադրման հնարավորությունները ՀՀ-ում,
- ՀՀ-ում տնտեսական ինստիտուտների ներառականության գնահատում,
- ՀՀ-ում առկա ինստիտուտների ներառականության բարձրացման համար անհրաժեշտ քայլեր՝ քաղաքական, կրթական, սոցիալական և տնտեսական դաշտերում,
- ՀՀ-ում անհրաժեշտ նոր կառույցների ձևավորումը տնտեսական ինստիտուտների ներառականությունը բարձրացնելու նպատակով,
- մշակված առաջարկությունների և լուծումների ազդեցությունը կոռուպցիոն դրսևորումների վրա:

Գրավոր աշխատանքները կարդալուց հետո դասախոսը գրավոր մեկնաբանություններ է գրում: Հաջորդ դասաժամին կազմակերպում է քննարկում լավագույն մշակված լուծումների և առաջարկների վերաբերյալ: Լավագույն առաջարկների հեղինակները բանավոր ներկայացնում և պաշտպանում են իրենց լուծումները: Քննարկման վերջում առաջարկությունները կդրվեն քվեարկության, և կհաղթի ամենաշատ ձայն հավաքած սովորողը: Առաջադրանքի համար տրվում է մեկ շաբաթ ժամանակ:

Առաջադրանքի գնահատում

Առաջադրանքը չի գնահատվում:

Վարժություն 4.

Գործնական դասաժամի ընթացքում դասախոսը սովորողներին բաժանում է 3-4 հոգուց բաղկացած խմբերի, որոնց տրվում է 30 րոպե՝ հանձնարարված թեման վերլուծելու և արագ պատասխաններ պատրաստելու համար:

Առաջադրանք

Դասախոսը գրատախտակին գծում է աղյուսակ՝ կազմված երկու սյունակից: Առաջին սյունակի վերնագիրն է՝ «Ստվերային տնտեսության առաջացման պատճառները», երկրորդ սյունակինը՝ «Հակազդման քայլեր»: Խմբերին հանձնարարվում է 30 րոպեի ընթացքում վերլուծել և սահմանել ստվերային տնտեսության առաջացման պատճառները, այնուհետև մշակել յուրաքանչյուր պատճառին հակազդելու լուծումներ: Ժամանակի ավարտից հետո խմբերը ներկայացնում են իրենց բացահայտած պատճառներն ու հակազդման քայլերը, և այդպիսով աղյուսակը լրացվում է:

Առաջադրանքի գնահատում

Առաջադրանքի գնահատականը նշանակվում է ամբողջ խմբի համար:

Խմբային գնահատականը նշանակվում է՝ հաշվի առնելով՝

- բացահայտված պատճառների քանակը և դրանց հիմնավորվածությունը,
- մշակված հակազդող քայլերի, լուծումների և միջոցառումների որակը, իրատեսությունը և ծախսատարությունը:

Վարժություն 5.

Առաջադրանք

Խմբերին տրվում է հանձնարարություն՝ մշակել պետություն-մասնավոր հատված սերտաճման երևույթը չեզոքացնելու լուծումներ և առաջարկներ, ինչի համար պետք է հետազոտել ԱՄՆ-ի, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային երկրների փորձն ու առկա խնդիրները: Վերլուծելով և համադրելով առկա միջազգային փորձը՝ խմբերն առաջարկություններում պետք է ներառեն առկա շահագրգիռ կառույցների բացերը և խնդիրները, կառույցների վերակազմավորման կամ նորերի ձևավորման հնարավորությունները, ինչպես նաև բարեփոխումների անհրաժեշտությունը:

Գործնական դասաժամին յուրաքանչյուր խումբ իր առաջարկությունները ներկայացնում է PPT ձևաչափով, համապատասխան հիմնավորումներով և գնահատվում է:

Ներկայացվող աշխատանքը պետք է ներառի՝

- պետություն-մասնավոր հատված սերտաճման խնդրի և կոռուպցիայի հետ դրա կապի հակիրճ նկարագրություն,
- ԱՄՆ-ի, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային երկրների փորձն ու առկա խնդիրները՝ թեմայի համատեքստում,
- Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր հատված սերտաճման խնդրի վերլուծություն և գնահատում. վերջինս պետք է ներառի միջազգային կառույցների կողմից տրված գնահատականները և դրանց մեկնաբանումը,
- առաջարկությունների և լուծումների մշակում՝ առկա խնդիրը չեզոքացնելու և կանխելու համար՝ վերլուծելով և համադրելով միջազգային փորձը. առաջարկությունները պետք է ներառեն ինչպես խնդրին վերաբերող կառույցների բարեփոխումներ, այնպես էլ նոր կառույցների ձևավորման լուծումներ:

Իրենց վերլուծությունն ու առաջարկությունները ներկայացնելու համար յուրաքանչյուր խմբի տրվում է 15 րոպե ժամանակ, ևս 10 րոպե տրվում է հարցուպատասխանի համար:

Պատրաստվելու և ներկայացնելու համար խմբերին տրվում է մեկ շաբաթ ժամանակ:

Առաջադրանքի գնահատում

Առաջադրանքի գնահատականը կազմված է երկու հավասար մասերից՝ վերլուծության և դրա ներկայացման որակից (խմբային գնահատական) և հարցերին պատասխանելուց (անհատական գնահատական): Խմբային գնահատականը նշանակվում է՝ հաշվի առնելով, թե աշխատանքում որքան լավ են ներառվել վերոնշյալ կետերը:

Վարժություն 6.

Խմբային աշխատանք և արդյունքների ներկայացում PPT-ի միջոցով: Աշխատանքը պետք է ներառի գրականության և օրենսդրության վերլուծություն, առկա իրավիճակի մասնագիտական գնահատում և առաջարկությունների մշակում:

Առաջադրանք

ՀՀ-ում և մի շարք այլ զարգացած երկրներում բիզնեսի սերտաճումը պետության հետ, այլ կերպ ասած՝ բիզնեսի քաղաքականացումը, հղի է բազմաթիվ կոռուպցիոն ռիսկերով: Մեծ ֆինանսական միջոցների տիրապետող բիզնեսը, անմիջականորեն ներառվելով քաղաքականության մեջ և պետական մարմիններում, ծնում է կոռուպցիոն ռիսկեր: Մինչ դրա դեմ պայքարելը պետք է հասկանալ այդ երևույթի դրդապատճառները: Ոչ մի բիզնես չի ցանկանում շեղվել իր գործունեության հիմնական ուղղությունից և ներքաշվել քաղաքական գործընթացների մեջ. շատ դեպքերում բիզնեսը ստիպված է դա անել, իսկ հիմնական դրդապատճառն այն է, որ բիզնեսը իր շահերը պաշտպանելու և պետական մարմիններում իր ձայնը լսելի և նշանակալից/ազդեցիկ դարձնելու այլ միջոց չի գտնում, ինչն էլ վերջին հաշվով հանգեցնում է կոռուպցիոն դրսևորումների, իսկ խոշոր բիզնեսի դեպքում՝ «էլիտար» կոռուպցիայի ծաղկման:

Բիզնեսը միավորող ոչ պետական կառույցների դերը առանցքային և նշանակալից է վերոնշյալ գործընթացները կանխելու և կոռուպցիոն ռիսկերը չեզոքացնելու համար: Այդպես շատ երկրներում բիզնեսն իր ձայնը լսելի, հասանելի և ազդեցիկ է դարձնում առևտրաարդյունաբերական պալատների միջոցով, որոնց անդամ է հանդիսանում և անմիջականորեն ընտրում է ղեկավար կազմին: Առևտրաարդյունաբերական պալատներն այն միջանկյալ և կոռուպցիոն իմաստով անվտանգ կառույցներն են, որոնք կարողանում են միջնորդված, բայց օրինական կերպով ազդել պետական որոշումների և տնտեսական քաղաքականության վրա՝ առանց անմիջականորեն ներքաշվելու քաղաքական գործընթացների մեջ:

Այդուհանդերձ, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի ինտեգրումը մասնավոր ոլորտի կյանքին շատ թույլ է արտահայտված, իսկ դրա ազդեցությունը պետական մարմինների վրա աննշան է: Առևտրաարդյունաբերական պալատների կամ բիզնեսին միավորող այլ կառույցների կայացումը գերկարևոր խնդիր է՝ բիզնեսի ապաքաղաքականացման և այդպիսով կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման առումով:

Հանձնարարություն

- Վերլուծել ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի մասին օրենքը և բացահայտել հնարավոր թերությունները,
- հետազոտել ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի ներկա իրավիճակը, դրա դերը և նշանակությունը Հայաստանի տնտեսական կյանքում, հիմնական գործառույթները, եկամտի աղբյուրները, իրականացված ծրագրերը, անդամակցության մոդելները,
- ուսումնասիրել առևտրաարդյունաբերական պալատների կայացման և գործունեության միջազգային փորձը,
- մշակել և առաջարկել կառավարչական, վարչարարական և օրենսդրական լուծումներ, որոնք կբարձրացնեն պալատի դերը ՀՀ տնտեսական կյանքում, և որի հետևանքով հայկական բիզնեսը կապաքաղաքականացվի:

Իրականացված վերլուծությունը և մշակած լուծումները պետք է ներառեն՝

1. առկա իրավիճակի ախտորոշումը, բացահայտված խնդիրները,
2. անհրաժեշտ օրենսդրական և կառավարչական բարեփոխումները,
3. պալատի անդամակացության նոր մոդելները,

4. պալատի գործունեության ընդլայնման մեթոդները/ուղիները և լուծումները,
5. իրականացված լուծումների հետևանքով ակնկալվող բիզնեսի ապաքաղաքականացման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման հնարավորությունները:

Առաջադրանքի գնահատում

Իրենց վերլուծությունն ու առաջարկությունները ներկայացնելու համար յուրաքանչյուր խմբի տրվում է 15 րոպե ժամանակ, ևս 10 րոպե տրվում է հարցուպատասխանի համար:

Պատրաստվելու և ներկայացնելու համար խմբերին տրվում է մեկ շաբաթ ժամանակ:

Առաջադրանքի գնահատականը կազմված է երկու հավասար մասերից՝ վերլուծության և դրա ներկայացման որակից (խմբային գնահատական) և հարցերին պատասխանելուց (անհատական գնահատական): Խմբային գնահատականը նշանակվում է՝ հաշվի առնելով, թե աշխատանքում որքանով են ներառվել վերոնշյալ կետերը:

Թեմա 4. Կոռուպցիան հանրային ֆինանսների կառավարման ոլորտում

Վարժություն 7.

Խմբային աշխատանք, իրավիճակի ուսումնասիրություն և վերլուծություն:

Առաջադրանք

Սովորողների՝ 3-4 հոգուց բաղկացած խմբերին հանձնարարվում է՝

1. ընտրել որևիցե ՊՈԱԿ, ԾԻԳ կամ պետական հիմնադրամ և ուսումնասիրել դրա գործունեությունը՝ հանրային ֆինանսների կառավարման տեսանկյունից,
2. հետազոտել հանրային ֆինանսների կառավարման վերաբերյալ օրենսդրությունը՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, օրենքով նախատեսված ընթացակարգեր և այլն,
3. բացահայտել տվյալ կազմակերպության գործունեության խոցելի տեղերը կոռուպցիայի տեսանկյունից՝ կոռուպցիոն ռիսկերը, և մշակել առաջարկություններ ինչպես օրենսդրական, այնպես էլ վարչարարական և կառավարչական տեսանկյունից այդ ռիսկերը չեզոքացնելու նպատակով:

Առաջադրանքի կատարման համար տրվում է մեկ շաբաթ ժամանակ: Հաջորդ շաբաթ յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր վերլուծությունը և առաջարկները բանավոր՝ օգտվելով PPT գործիքից:

Առաջադրանքի գնահատում

Առաջադրանքը գնահատվում է՝ հաշվի առնելով այն, թե խումբն ինչ խորությամբ է անդրադարձել հետևյալ կետերին.

- խմբի ընտրած պետական կառույցի հանրային ֆինանսների կառավարման ամբողջական նկարագրություն և վերլուծություն,
- օրենսդրական դաշտի, օրենքով նախատեսված ընթացակարգերի համապարփակ ներկայացում, նկարագրություն, մեկնաբանում և վերլուծություն,

● վերլուծության արդյունքում ստացված եզրակացություններ, տվյալ առաջադրանքի դեպքում՝ խոցելի կետերի՝ կոռուպցիոն ռիսկերի բացահայտում,

● մասնագիտական դիրքորոշում, կարծիք և առաջարկություններ:

Վարժություն 8.

Թեմատիկ վերլուծական ակնարկի պատրաստում (անհատական գրավոր աշխատանք):

Առաջադրանքի թեմաներ: Վերլուծական ակնարկ գրելու նպատակով ուսանողներին առաջարկվում է ընտրել նշված թեմաներից մեկը (առանձին դեպքերում դասախոսի հետ քննարկումից հետո հնարավոր է թեմաներ ընտրել նաև ցուցակից դուրս).

1. Նպատակային և պաշտոնական պարտականությունների թերի կատարման կամ վատ կառավարման հետևանքով առաջացած հանրային ֆինանսների վատնում,
2. Կոռուպցիոն դրսևորումների բացահայտման գործում ծախսեր-արդյունք վերլուծության գործիքակազմի հնարավորությունները,
3. Պետական եկամուտների հավաքագրման ընթացքում ծագող կոռուպցիոն ռիսկերի բացահայտում, վերլուծություն և մեկնաբանում,
4. Պետական գնումներին վերաբերող օրենսդրության և ընթացակարգերի վերլուծություն՝ կոռուպցիոն ռիսկերի բացահայտման համատեքստում,
5. Հանրային ֆինանսների վրա վերահսկողության միջոցների վերլուծություն:

Առաջադրանքի կատարման համար տրվում է մեկ շաբաթ ժամանակ: Աշխատանքների հանձնումից և դասախոսի կողմից դրանց գնահատումից հետո կազմակերպվում է լսարանային քննարկում կատարված աշխատանքների շուրջ:

Առաջադրանքի գնահատում

Առաջադրանքը գնահատվում է անհատապես՝ գրավոր աշխատանքի հիման վրա: Գնահատականը նշանակվում է՝ հաշվի առնելով՝

1. պատրաստված գրականության տեսությունը (literature review),
2. առկա օրենսդրական դաշտի իմացությունը և վերլուծությունը,
3. մշակված եզրակացությունների և առաջարկությունների հիմնավորվածությունը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հեղինակներ՝

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ՝ իրավ. գիտ. թեկնածու՝ 1-ին մոդուլ (համատեղ.), 4-րդ մոդուլ

Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ՝ տնտ. գիտ. թեկնածու՝ 2-րդ մոդուլի 1-ին (համատեղ.), 2-5-րդ թեմաներ, 3-րդ մոդուլի 3-5-րդ թեմաներ

Վ. ՀՈԿՏԱՆՅԱՆ՝ 1-ին մոդուլի 1-4-րդ թեմաներ (համատեղ.), 2-րդ մոդուլի 1-ին թեմա (համատեղ.)

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ 3-րդ մոդուլի 1-ին և 2-րդ թեմաներ

Խ. ԲԵԶԻՐՋՅԱՆ՝ կենս. գիտ. թեկնածու, 5-րդ մոդուլ

Թ. ԽԵՉՈՅԱՆ՝ 6-րդ մոդուլ

Խմբագիր և սրբագրիչ՝
Հ. ՍԱՄՎԵԼՅԱՆ

Համակարգչային ձևավորող՝
ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Չափսը՝ 70x100 (1/16): Ծավալը՝ 4.7 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

Ա՛նտարես

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am